

ԲԵԹՂԵՀԷՄԸ՝ ՀՈՎԻԻՆԵՐՈՒ ԺԱՆԱՊԱՐՀԸ

«Մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու»
(Մտ 18.11)

Որքա՛ն մեծ ցնծութեամբ եւ ուրախութեամբ դարձեալ կը լսուին Ս. Ծննդեան աւետարտը զանգերը, եւ միլիոնաւոր հաւատացեալներ խոնարհութեամբ կը նային Բեթղեհէմի անշուք մսուրին, եւ մենք հոգեթով ու հրեշտակաձայն կ'երգենք շարականագիր վարդապետին բառերով.

«Խորհուրդ մեծ եւ սքանչելի

Որ յայտ աւուր յայտնեցաւ...

Որդիք մարդկան օրհնեցէ՛ք,

Զի վասն մեր մարմնացաւ...» (Շարական):

Այո՛, այսօր յայտնուեցաւ մեծ ու սքանչելի խորհուրդը. մարդո՛ց որդիներ, օրհնաբանեցէ՛ք զի՛նք, որովհետեւ Ան մեզի համար մարմնացաւ:

Երկնային հրեշտակները պարզ ու անմեղ հովիւներուն միջոցով մեղքի ու խաւարի մէջ տուալտող մարդկութեան աւետեցին Ս. Ծննդեան պատգամը, մեծ փառաբանութեամբ՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղկ 2.14–15):

Բեթղեհէմի ճանապարհը՝ մարդկութեան ուրախութեան ճանապարհը, Մարմնացեալ աւետիսին ականատես ըլլալու ճանապարհն է՝ հանդիպելու ուրախութեան ծնունդին եւ Սպասուածը ողջունելու:

Բեթղեհէմի ճանապարհը դարերու պատգամի ճամբան է, յոյգերու եւ գեղեցկազոյն զգացումներու ճանապարհ, երազանքի ճանապարհ՝ դէպի նոր կեանք, Նորածինին հանդիպումով: Հովիւները եկան, մարդկութեան հօտի հովիւին հանդիպելու, Քաջ հովիւին, որ եկած էր կորսուածը փրկելու. անոնք լաւ գիտէին նշանակութիւնը կորսուածին ետեւէն գացող հովիւին, չէ՞ որ իրենք ալ շատ առիթներով վազած էին իրենց կորսուած թէկուզ մէկ կորսուած ոչխարը գտնելու. բացի հովիւներէն, ո՞վ կրնար այսքան ճիշդ հասկնալ Նոր եւ Քաջ հովիւի ծննդեան պատգամի վեհութիւնը:

Քսան դարեր անցած են այն հրաշալի ծնունդէն, բայց բեթղեհէմեան այս ծնունդը, իր պատգամի իրականութեամբ եւ իսկութեամբ կը մնայ նոյնը:

Քրիստոս՝ Աստուծոյ ձայնը, բոլորին կը բացատրէր իր մարդեղութեան խորհուրդը, աշխարհ գալու կենսական եւ աշխարհին մէջ ըլլալու նպատակը, եւ զի՛նք կը ներկայացնէր քաջ հովիւի օրինակով եւ կ'ըսէր. «Ես եմ իսկական հովիւը: Իսկական հովիւը իր կեանքը կու տայ ոչխարներուն համար» (ՅՏ 10.11): Այստեղ Քրիստոս զանազանութիւն կը դնէ վարձկան

հովիւին եւ ճշմարիտ՝ քաջ ու արթուն հովիւին միջեւ, եւ կ'ըսէ, որ վարձկանը իրաւ, ճշմարիտ եւ արթուն հովիւ չի կրնար ըլլալ, տիրութիւն չի կրնար ընել իր ոչխարներուն. երբ գայլը, թշնամին կու գայ, անտէր կը ձգէ ոչխարները եւ փախուստ կու տայ, երբե՛ք չի մտահոգուիր, զոհողութիւն յանձն չ'առնէր ոչխարները փրկելու չարէն, գայլին յափշտակիչ ձեռքէն:

Քրիստոս կը շարունակէ աւելի իրական պատկերներով բացատրել իր խօսքը եւ կ'ըսէ. «Ես եմ իսկական հովիւը: Կը ձանձնամ իմ ոչխարները, եւ անոնք ալ զիս կը ճանաչնան» (ՅՏ 10.14): Արդարեւ շատ իրական է կեանքէն վերցուած այս պատկերը, երբ հովիւը իր ոչխարներուն անուն կու տայ՝ ճանաչողութեան գրաւականը, երբ ոչխարները իրենց հովիւին ձայնը կը ճանչնան, հովիւն ալ իր ոչխարները կը ճանչնայ իրենց անուններով: Ահաւասիկ հիմքը մէկ եւ միասին ըլլալու՝ ճանչնալ զիրար, ոչ իրեւ իրարու ծանօթներ, այլ հարգատառոյն մտերմութեամբ կապուած արարածներ՝ մէկ հօտ եւ մէկ հովիւ:

Ո՞վ է հովիւը: Միայն ես չեմ. դո՛ւն ես, դո՛ւք էք, մենք բոլորս ալ հովիւներ ենք, բայց առանց պատասխանատուութեան, անձնւիրութեան եւ զոհողութեան հովուութիւն չկայ: Մէկը որպէս հոգեւոր առաջնորդ հովիւ է, միւսը որպէս ընտանիքի հայր հովիւ է, ուսուցիչը դպրոցին մէջ հովիւ է. մէկ խօսքով, բոլորս ալ հովիւներ ենք եւ պարտաւոր ենք մեր հայեացքը դարձնել դէպի Բեթղեհէմ, լոյսի եւ յոյսի օրրան:

Ո՞վ է հովիւը:

Միւրոզ անձ է, որ գիտէ ի՛նչ կը նշանակէ սիրել,

Հոգատար անձ է, որ գիտէ խնամել,

Քաջ անձ է, որ գիտէ կուռելով պաշտպանել իրեն յանձնուածը:

Ո՞վ է հովիւը: Չենք կրնար տարակուսել, որ իսկական, քաջ եւ արթուն հովիւը ՔՐԻՍՏՈՍՆ է. բայց ահա պաշտպանութեան կանչուածն ու զրկուածը, որպէս քաջ հովիւ, ի՛նք դարձաւ զոհ. զոհ, որ մարդը հաշտեցուց Աստուծոյ հետ, որպէսզի մարդիկ ազատագրուին իրենց մեղքերէն: Ան իր անձը զոհեց, իր կեանքը տուաւ իր ոչխարներուն, իր հօտին՝ իր ժողովուրդին համար: Իրաւ ոչխարները անոնք են, որոնք կը ճանչնան իսկական հովիւը, կը լսեն Քրիստոսի ձայնը եւ կը հետեւին անոր:

Երբ Յիսուսին կը նայինք, մէկ հովիւին կը սեւեռուին մեր աչքերը, այն ատեն մենք նոյն հօտի ոչխարները կը դառնանք: Հետեւաբար, այսօր որպէս հաւատարիմ ոչխարներ, եթէ կ'ուզենք հետեւիլ Քրիստոսին՝ Մեծ Հովուապետին, ընդունի՛նք զի՛նք որպէս մեր կեանքի ապաւէնն ու առաջնորդը, մեր «Ճանապարհը, ճշմարտութիւնը եւ Կեանքը»: Ծանչնա՛նք զի՛նք. Այս ճանաչողութեամբ է, որ մենք զիրար կրնանք ճանչնալ. լսենք Անոր ձայնը, նոյն ձայնը լսելով է, որ մեր աչքերը կը սեւեռուին նոյն հովիւին եւ հաւատանք, որ միեւնոյն հօտի անդամներն ենք: Մեր ճամբան նոյնն է, միասին քայլելու, այնտեղ միասին ըլլալու, որպէսզի կարենանք վայելել Անոր մշտական ներկայութիւնն ու հսկողութիւնը, վայելելու միասին ըլլալու երանութիւնը, հեռու մնալով ամէն տեսակ չար փորձութիւններէն եւ



մեղքի կապանքներէն: Մենք Քրիստոսով եւ իրարմով հզօր ենք, որովհետեւ Մէկ ենք:

Երբ ահա այսպէս, երբ նոյն ճանապարհին իրարու կը հանդիպինք, զիրար կը գտնենք եւ իրարու կը նայինք՝ կը հասկնանք, որ միեւնոյն ճանապարհին կանգնած հովիւներ ենք, եւ թէ՛ որքա՛ն պարտաւորութիւններ ունինք՝ սիրելու, խնամելու զիրար, եւ քաջաբար նուիրուելու իրարու:

Բեթղեհէմի ճանապարհը կեանքի ճանապարհ է, որ մեզ կը հանդիպեցնէ Մեծ Սիրոյ Ծնունդին: Այս է գեղեցկութիւնը կեանքին, երբ միասին կ'ընդենք Նորածինի ծնունդին ընդառաջ երթալու, որուն մէջ է մարդկային ամէն ուրախութիւն: Երթալ ընդառաջ այդ ուրախութեան՝ կը նշանակէ զայն մեր կեանքի մասնիկը դարձնել, եւ Յիսուսի ծնունդով սիրել զիրար, Յիսուսի ծնունդով արիանալ մեր համայնական պայքարին մէջ:

Փրկութիւնը հովութեամբ կ'ըլլայ, Յիսուսի պատգամած հովիւի պատկերով՝ սիրելու, խնամելու եւ զոհաբերուելու:

Մենք՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ զաւակներս, ահաւասիկ այս խորհուրդն է, որ կը տօնենք այսօր, Ծնունդը քաջարի հովիւին, մեր հզօր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի:

Սա՛ է պատգամը Ս. Ծննդեան: Տարէ՛ք ձեզի հետ, այս սուրբ մսուրէն, ուր որ երթաք:

* * *

Ս. Ծննդեան նուիրական այս օրերուն, սիրոյ իմ սրտագին ողջոյնս կ'ուղղեմ ձեզի՝ բոլորիդ, Թեմիս հոգեւորականաց դասուն, ժողովականութեան, ազգային-եկեղեցական մարմիններուն, եկեղեցիներու սպասաւորներուն՝ սարկաւազներուն եւ զպրաց դասերուն, կրթական, բարեսիրական, կանանց, երիտասարդական, մարզական եւ մշակութային միութիւններուն, ազգային վարժարաններուն, Կիրակնօրեայ ու Շաբաթօրեայ դպրոցներու ուսուցչական կազմերուն եւ ուսանողութեան, եւ մեր սիրեցեալ ժողովուրդի բոլոր զաւակներուն անխտիր, սիրածայն բարբառով՝

Չեզ եւ Մեզ Մեծ Աւետիս՝

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին



HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777
www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian



HONDA



MARCHÉ ADONIS



**FAITES APPEL À NOTRE SERVICE TRAITEUR
POUR VOS OCCASIONS FESTIVES**



JOYEUX TEMPS DES FÊTES !

HAPPY HOLIDAYS

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /   

Canada



HOUSE OF COMMONS
CHAMBRE DES COMMUNES
CANADA

Merry Christmas

and a Happy New Year, from your Liberal MPs

De la part de vos députés libéraux, nous vous souhaitons un

Joyeux Noël, et une excellente année 2019 !



TRÈS HON. Justin Trudeau
MP / Député
Papineau
Justin.Trudeau.c1c@parl.gc.ca
(514) 277-6020



Frank Baylis
MP / Député
Pierrefonds – Dollard
Frank.Baylis@parl.gc.ca
(514) 624-5725



Anju Dhillon
MP / Députée
Dorval – Lachine – LaSalle
Anju.Dhillon@parl.gc.ca
(514) 639-4497




Fayçal El-Khoury
MP / Député
Laval – Les Îles
Faycal.El-Khoury@parl.gc.ca
(450) 689-4594




HON. Marc Garneau
MP / Député
Notre-Dame-de-Grâce – Westmount
Marc.Garneau@parl.gc.ca
(514) 283-2013



Anthony Housefather
MP / Député
Mount Royal / Mont-Royal
Anthony.Housefather@parl.gc.ca
(514) 283-0171



HON. Mélanie Joly
MP / Députée
Ahuntsic-Cartierville
Melanie.Joly@parl.gc.ca
(514) 383-3709



Emmanuella Lambropoulos
MP / Députée
Saint-Laurent
Emmanuella.Lambropoulos@parl.gc.ca
(514) 335-6655



David Lametti
MP / Député
LaSalle – Émard – Verdun
David.Lametti@parl.gc.ca
(514) 363-0954



Alexandra Mendès
MP / Députée
Brossard – Saint-Lambert
Alexandra.Mendes@parl.gc.ca
(450) 466-6872



Marc Miller
MP / Député
Ville-Marie – Le Sud-Ouest – Île-des-Sœurs
Marc.Miller@parl.gc.ca
(514) 496-4885



Eva Nassif
MP / Députée
Vimy
Eva.Nassif@parl.gc.ca
(450) 967-3641



Francis Scarpaleggia
MP / Député
Lac-Saint-Louis
Francis.Scarpaleggia@parl.gc.ca
(514) 695-6661



HON. Pablo Rodriguez
MP / Député
Honoré-Mercier
Pablo.Rodriguez@parl.gc.ca
(514) 353-5044

«ՀՄԸՄ-ը 67 տարի գործեց հայրենիքէն դուրս, բայց երբեք՝ առանց հայրենիքի»․ Գառնիկ Մկրտիչեան

Ստորեւ կը ներկայացնեմք ՀՄԸՄ-ի Կեդրոնա-կան վարչութեան ատենապետ եղբայր Գառնիկ Մկրտիչեանի խօսքը, զոր արտասանեց Մոնթրէալի մէջ կայացած ՀՄԸՄ-ի 100-ամեակի տօնակատարու-թեան, Կիրակի, 25 Նոյեմբեր 2018-ին։

Յարգելի՛ ներկաներ․

100 տարի առաջ, երբ ՀՄԸՄ-ի՝ Հայ Մարմնակր-թական Ընդհանուր Միութեան հիմնադիրները Պոլսոյ մէջ հիմը կը դնէին Հայ իրականութեան մարզական եւ սկստական մեծագոյն միութեան, դժուար թէ կարե-նային երեւակայել, որ 100 տարի ետք, իրենց հիմնած միութիւնը անկախ Հայաստանի մայրաքաղաքին մէջ, 100-ամեակ պիտի տօնէր, Հայ քաղաքական, ազգային եւ եկեղեցական աւագանիին ներկայութեամբ։

100 տարի առաջ, որբերու խնամքով եւ դաստիա-րակութեամբ զբաղող միութեան հիմնադիրները դժուար թէ երեւակայէին, որ 100 տարի ետք, իրենց յա-ջորդները պիտի զբաղէին որբացած գաղութներով եւ անոնց հայապահպանման կարիքներով։

100 տարի առաջ, Պոլսոյ եւ արուարձաններուն մէջ քանի մը մասնաճիւղով գործող այս միութեան հիմնադիրները դժուար թէ երեւակայէին, որ 100 տարի ետք, իրենց սիրելի միութիւնը համահայկական իր կա-ռոյցով պիտի գործէր աշխարհի 110 քաղաքներուն մէջ, աւելի քան 25 հազար երկսեռ անդամներով, մարզական եւ սկստական ժիր շարքերով։

100 տարին երկար ժամանակ է մարդու մը կեան-քին համար, սակայն կա՛րճ, չա՛տ կարճ ժամանակ է ազգային հաւաքականութեան մը համար, սովահար, գաղթական եւ որբացած սերունդներէ միտքով ու մարմնով առողջ, ազգային իրենց ինքնութեամբ հպարտ եւ արժանապատիւ սերունդներ կերտելու հա-մար։

Ու զարմանալի բան չկայ ասոր մէջ, որովհետեւ՝ սովորական միութիւն մը չեղաւ ՀՄԸՄ-ը, սովորական պայմաններու մէջ չգործեց ՀՄԸՄ-ը, ՀՄԸՄ-ը ծնաւ Հայոց Յեղասպանութեան արհաւիրքին ընդմէջէն։ Իր առաջին քայլերը առաւ նորանկախ Հայաստանի Հան-րապետութեան առաջին օրերուն, երբ ազգ ու հայրենիք կը դիմադրաւէին տեսակաւոր մարտահրաւէրներ։

Հազիւ չորս տարեկան, ՀՄԸՄ-ը հեռացա՛ւ, աւելի ճիշդ՝ հեռացուեցաւ իր հարազատ բնօրրանէն։ Դարձաւ Սփիւռք եւ ուղիղ 67 տարի գործեց առանց հայրենի հո-ղի, սփիւռքեան իր կեդրոններէն իւրաքանչիւրը վերա-ծելով հայրենի հողի մէկական կտորի։

ՀՄԸՄ-ը գործեց առանց պետական հովանիի։ Ընդհակառակն՝ պատահեցաւ, որ ան հալածուեցաւ, մերժուեցաւ եւ դատապարտուեցաւ կարմիր պատմու-ճան հագած իր հարազատ երկրի պետական վարիչնե-րուն կողմէ։ Ան հալածուեցաւ նաեւ Հայաստանէն դուրս, երբ Երկրորդ աշխարհամարտի տարիներուն, նոյն կարմիրները փակեցին արեւելեան Եւրոպայի՝ Ռու-մանիոյ եւ Պուլկարիոյ իր 19 մասնաճիւղերը, տասն-եակներով ձերբակալութիւններ կատարեցին, հաւատա-ւորները Սիպերիա աքսորեցին եւ մինչեւ նահատակու-թեան դափնեպսակին արժանացուցին զանոնք։ ՀՄԸՄ-ը ծանր դին վճարեց ազատ ու անկախ հայրենիքի գա-ղափարակիրը ըլլալուն համար։

Սփիւռքի մէջ, ան երբեք դիւրին պայմաններու մէջ չգործեց։ ՀՄԸՄ-ի մարզախաղեր կիրարկեց առանց մարզադաշտ ունենալու։ ՀՄԸՄ-ը սկստւտութիւն կազ-մակերպեց առանց անհրաժեշտ յարմարութիւններ ունե-նալու, բայց գործեց եւ չա՛տ լաւ գործեց, որովհետեւ կամաւոր բանակի սկզբունքով, անոր անդամներէն իւ-րաքանչիւրը իր միտքն ու բազուկը ի սպաս դրաւ հա-ւաքականին, ազգին ու հայրենիքին։ ՀՄԸՄ-ը գործեց, մեծցաւ, ուժնացաւ եւ հզօրացաւ՝ բացառաբար ապա-ւինելով իր անդամներու կամաւոր աշխատանքի դի-տակցութեան, պատրաստակամութեան եւ զոհողութեան ոգիին։

Այսպէս է, որ քանի մը մասնաճիւղերը դարձան քանի մը տասնեակ մասնաճիւղեր։ Մասնաճիւղերը վե-

րածուեցան շրջաններու։ Շրջանները՝ համագաղութա-յին կառոյցի, իսկ համագաղութային կառոյցն ալ՝ հա-մահայկական կազմակերպութեան, որ այսօր իր հո-վանիին տակ կը համախմբէ աշխարհի 26 շրջաններէ 110 մասնաճիւղեր եւ միաւորներ։

ՀՄԸՄ-ը գործեց ամէնուրեք։ Գործեց բոլորի՛ն համար։ Բոլորի՛ն հետ։ Ճիշդ է, որ ՀՄԸՄ-ը 67 տարի գործեց հայրենիքէն դուրս, բայց երբեք՝ առանց հայրե-նիքի։ Ու երբ պահը հասաւ, 67 տարուան վտարան-դիութենէ ետք, ՀՄԸՄ վերադարձաւ հայրենիք, աշ-խարհասփիւռ իր անդամները կապելով կեդրոնին, ար-մատի՛ն, ուրկէ անոնք կը ստանան իրենց գոյատեւման շունչն ու աւիշը։

ՀՄԸՄ-ը հայրենիք վերադարձաւ 1989-ին, երբ տակաւին Հայաստան չէր անկախացած։ Ան գործեց տազնապալի պայմաններու մէջ։ Գործեց Ղարաբաղեան պատերազմի, տնտեսական շրջափակման եւ քաղաքա-կան ամենէն աննպաստ պայմաններու մէջ, բաժնեկցե-լով իր հարազատ ժողովուրդին դժուարութիւններն ու մտահոգութիւնները։

Դժուարութիւնները, սակայն, փորձառութիւն ներշնչեցին ՀՄԸՄ-ին, փորձառութիւնը՝ տոկունութիւն եւ յաւելեալ իմաստութիւն։ Այսպէս, ՀՄԸՄ-ը ունեցաւ Ղարաբաղեան պատերազմի իր նահատակները, մասնա-կից դարձաւ նոր Հայաստանի կերտման ճիգերուն։ Կրթեց ու դաստիարակեց սերունդներ՝ անոնցմէ պատ-րաստելով օրինապահ քաղաքացիներ եւ հայրենիքի դի-նուորեալներ։ ՀՄԸՄ-ը գործեց անաղմուկ։ Գործեց խոր հաւատքով եւ աննկուն կամքով, իրեն գերագոյն արժէք ունենալով պետականութիւնը, գերիշխանութիւնը, ըն-կերային արդարութիւնը եւ ազգային պահանջատիրու-թիւնը։ ՀՄԸՄ-ը գործեց իբրեւ Հայաստանի Ազգային Սկստական Կազմակերպութիւն, ՀՄԸՄ-ՀԱՍԿ, որ Հայաստանի արժանաւոր ներկայացուցիչը եղաւ Հա-մաշխարհային Սկստական Շարժումի Բիւրոյին մէջ, միաժամանակ հիմնադիր եւ գործադիր անդամ ըլլալով սկստական եւրասիական բաժանմունքին։ ՀՄԸՄ-ը գործեց Բիւրականի ու Երեւանի իր սեփական բանակա-վայրերով, մայրաքաղաքի եռայարկ կեդրոնով եւ շրջաններու իր գրասենեակներով։

Հայրենիքը կիզակէտը հանդիսացաւ ՀՄԸՄ-ի գործունէութեան։ Կիզակէտին շուրջ հիւսուեցաւ ան-տեսանելի թիկերով իրարու կապուած գործունէութիւն մը, որ իրարու կապեց Պուէնոս Այրէսն ու Փուէյթօը, Մոսկուան եւ Պէյրութը, Միւնիխն ու Հալէպը, Պոսթընն ու Մոնթրէալը, Սիտինն եւ Գահիրէն։ Թիւերու շարքը կարելի է երկարել եւ թուել բազմատասնեակ այլ քա-ղաքներ եւս, ուր մարմնակրթական այս միութիւնը 100 տարի է, որ լծուած է մարդակերտման եւ հայակերտման վեճ աշխատանքին, կարելի բոլոր միջոցներով ու անկա-րելիութեան սահմանները հասնող, աներեւակայելի եռանդով, խանդով ու կամքով։

Այս տարի ադամանդեայ յոբելեանի տօնակատա-րութեան տարին է։

Պահն է յիշելու եւ խոնարհելու յիշատակին դիմաց բոլոր այն ՀՄԸՄ-ականներուն, որոնք անցնող մէկ դարուն եկան ու անցան այս միութենէն, իրենց հետքն ու դրոշմը ձգելով անպայման։

Պահն է յիշելու եւ խոնարհելու յիշատակին դիմաց այն բոլոր հաւատաւորներուն, որոնք անցնող 100 տա-րիներուն այս աշխարհէն մեկնեցան ազատ մարդու եւ անկախ հայրենիքի երազը իրենց աչքերուն։

Պահն է յիշելու եւ խոնարհելու դիմացը այն կա-կուղ թաթիկին, մեր այսօրուան նորահաս սկստւտին, որ այսօր ՀՄԸՄ-ի շարքերուն մէջ իր առաջին թոթովան-քին հետ կը սորվի ազգի ծառայութիւն եւ հայրենիքի հաւատարմութիւն։

Պահն է, վերջապէս, յիշելու եւ խոնարհելու դիմա-ցը այն մարզիկին ու մարզիկուհիին, որ իր յաղթանակ-ներով ազգային խանդավառութիւն եւ հպարտութիւն կը ներշնչէ օրէ օր հայութենէ պարպուող հայ մարզոց։

Ապրի՛ք տղաք ու աղջիկներ։

Ապրի՛ք եւ ձեզմո՛վ ապրի ՀՄԸՄ-ը, 100-ամեայ վաստակով, բայց միշտ երիտասարդ ու կայտառ կազմա-կերպութեամբ, միշտ աշխոյժ եւ նորարար իր շարքերով։

100-ամեակի յոբելեանն է այսօր ՀՄԸՄ-ի մեր սրտին մօտիկ Գանատայի Շրջանին մէջ։ Շրջան մը, որ մեր միութեան տուած է վաստակաշատ Կեդրոնական Վարչութեան անդամներ եւ հաւատաւոր ու նուիրեալ ՀՄԸՄ-ականներու բանակներ։ Շրջան մը, որ իր անսա-կարկ աջակցութիւնը ցուցաբերեց ՀՄԸՄ-ի Կեդրոնա-կան Վարչութեան 100-ամեակի կեդրոնական ձեռ-նարկներու յաջողութեան համար, թէ՛ նիւթապէս ու մանաւա՛նդ բարոյապէս։ Սոյն աջակցութեան փաստը յաւերժ կանգուն պիտի մնայ Կիւմրիի մէջ Վահան Ձե-րագի արձանին ընդմէջէն։ Շրջան մը, որ միշտ մնաց մօտիկ ՀՄԸՄ-ի աշխարհատարած կառոյցին ու շարու-նակեց գործել ՀՄԸՄ-ականներու վայել աննկուն կամ-քով, մասնակցելով բոլոր Համա-ՀՄԸՄ-ական ձեռ-նարկներուն եւ ժողովներուն, միշտ հաւատարիմ ՀՄԸՄ-ի տեսլականին, միշտ պատրաստ ծառայելու մեր դարաւոր միութեան։

Շնորհաւորութեան խօսք՝ ՀՄԸՄ-ի Գանատայի շրջանի բոլոր անդամներուն, որոնք առիթն ու բախտը ունեցան միութեան 100-ամեակին ժամանակակիցները ըլլալու, տօնակատարութիւններուն մասնակից դառ-նալու եւ իրենց հաւաքական կամքին զօրութեամբ ան-գամ մը եւս հաստատելու 100 տարի առաջ, Հայաստա-նի լուսաւորութեան նախարար Նիկոլ Աղբալեանի այն բնորոշումը, թէ՛ «Մեծ է դերը ՀՄԸՄ-ին։ Այդ դերը լաւ ըմբռնելու համար անհրաժեշտ է ազգային բարձր գիտակցութիւն, այսինքն մեր ուժերուն, մեր արժէքին, մեր ընթացքին եւ նպատակին պայծառ ըմբռնում։ Յարգանք, պատկառանք եւ տեղը այս աշխարհին մէջ՝ ուժով կը ստացուի, կը պարտադրուի եւ կը ներշնչուի։ Իսկ ուժեղ են առոյգը, առողջն ու կորովին»։

ՀՄԸՄ-ը, յարգելի՛ ներկաներ, առոյգ, առողջ ու կորովի հայութիւն պատրաստող այդ միութիւնն է։

ՀՄԸՄ-ը մեր ուժին աղբիւրն է։ Մեր յաջողու-թեան գրաւականներէն մէկն է, որուն պէտք է գուր-գուրալ ազգովին։

100-ամեակի իր նշանաբանին հաւատարիմ, այ-սօր, աւելի քան երբեք, ՀՄԸՄ-ը պատուաբեր անցեալէն կ'ուղղուի յաղթական ապագայ։

Մենք լաւատես ենք ապագայով ու ապագայի մեր յաղթանակներով։ Ու մեր լաւատեսութիւնը բարի ցանկութիւններէ չի բխիր միայն, այլ՝ մեր աշխատան-քէն, կամքէն եւ համոզումէն, միշտ երիտասարդութեան ի սպաս գործելու մեր տրամադրութենէն, հայութեան եւ Հայաստանին անմնացորդ ծառայելու մեր երդումէն։

Չմոռնանք, որ մեր ժողովուրդը ՀՄԸՄ-ին տուած է «Կամաւոր բանակ»ի կոչում եւ պարտականութիւն։ Այդ կոչումն ու պարտականութիւնը կը թելադրեն այ-սուհետեւ ըլլալ աւելի զգօն ու պատրաստ՝ դիմադրա-ւելու մեր ժողովուրդին եւ հայրենիքին սպառնացող բոլոր տեսակի մարտահրաւէրները։ Ի վերջոյ, մեր կեան-քը, հայրենիք թէ սփիւռք, հայապահպանութեան հա-մար մղուող մէկ մեծ պատերազմ է։ ՀՄԸՄ-ը կամաւոր այն բանակն է, որ այդ մեծ պատերազմը, փոքր-փոքր կռիւներով, մասնաճիւղ առ մասնաճիւղ կը մղէ երկրէ երկիր, շրջանէ շրջան։ Ի՛նչ փոյթ, եթէ ան տեղ-տեղ կռիւը կը կորսնցնէ։ Կարեւորը մեծ պատերազմը չկորսնցնելն է։ Կարեւորը հայապահպանութեան գրահ-ները գետինը չդնելն է։

Այլապէս, ՀՄԸՄ-ը յաղթանակներու միութիւնն է։ Փա՛ռք 100-ամեայ ՀՄԸՄ-ին։

Բի՛ւր յարգանք ՀՄԸՄ-ի պատուաբեր անցեալը կերտած անցեալի հաւատաւորներուն։

Պատի՛ւ այսօր պատնէշի վրայ կանգնած սերուն-դին, որ 100-ամեակի ջահը ձեռքին՝ կը խոստանայ գայն առաջնորդել դէպի յաղթական ապագայ, դէպի մեր ժողովուրդի անկատար բոլոր իդձերու իրականա-ցում։ Դէպի միացեալ հայութեամբ, միացեալ, արդար ու հզօ՛ր Հայաստան։

Համացացանցի վրայ
Երկիր Մետայի
«Երկիրն այսօր» ծրագրի լուրերը
համակարգչային պատկերասփռումով
դիտելու համար այցելեցէ՛ք

www.yerkirmedia.am



Հայ Դատի յանձնախումբը կը հակադարձէ Գանատայի մէջ ատորպէշնանական նորագոյն հակահայ արշաւին

Հաղորդագրութիւն

Վերջերս, Գանատայի տարածքին Ատրպէյճանական շարք մը հոսանքներ, սաղ-րիչ արարքներով, անգամ մը եւս փորձեցին հրահրել Հայ համայնքը, սակայն անոնց փորձը, ինչպէս միշտ՝ մնաց ապարդիւն։ Այս անգամ, իրենք զիրենք որպէս կազմա-կերպուած համայնք ներկայացուցած, բազմատեսակ յերիւրանքներ եւ ապատեղեկա-տուութիւն տարածելով, փորձ կատարեցին բողոք ներկայացնել մեր կեդրոններու տա-րածքներէն ներս տեղադրուած Արցախեան դրօշակներուն դէմ։

Այս ուղղութեամբ, ՀՅԴ Գանատայի Հայ Դատի Յանձնախումբը կու գայ հաս-տատելու մեր ժողովուրդին, թէ Գանատահայ համայնքէն ներս, այնտեղ ուր կը տրո-փէ Հայ ժողովուրդի սիրտը, Արցախի Հանրապետութեան պանծալի դրօշը պիտի շա-րունակէ հպարտօրէն ծածանիլ, խորհրդանշելով Արցախեան ժողովուրդի ազատ ոգին ու վճռակամութիւնը եւ մեր սերունդներուն փոխանցելով Հայ ժողովուրդի արդար պայքարի կենսունակութիւնն ու յաղթանակը։

Անցնող քանի մը տարիներու ընթացքին, Գանատայի մէջ Արցախեան հիմնա-հարցի ուղղութեամբ տեղի ունեցած աննախագէյ պաշտօնադասքը, խորհրդարանա-կան այցելութիւնները, խորհրդարանէն ներս հնչած շարք մը յայտարարութիւնները, եւ մեր յանձնախումբի ընդհանուր աշխատանքը՝ ընդդէմ Ատրպէյճանական ապակա-յունացնող քաղաքականութեան, անհանգստացուցիչ կը թուի ըլլալ Գանատայի մէջ կայք հաստատած փոքրաթիւ Ատրպէյճանական համայնքին։

Նկատի ունենալով մեր քաղաքական ազդեցիկ լայն շրջանակներն ու կարողու-թիւնները եւ նամանաւանդ մեր օրակարգերէն ներս Արցախեան հիմնահարցի առաջ-նահերթութիւնն ու այդ ուղղութեամբ արձանագրուած յաջողութիւնները, զարմա-նալի պէտք է թուի, որ ատրպէյճանական համայնքը նման փորձ կը կատարէ Գանա-տահայ համայնքին դէմ, փորձելով ջլատել մեր պայքարը յանուն Արցախի ժողովուր-դի պահանջատիրութեան եւ արդար դատի լուծման։

Հետեւաբար, անգամ մը եւս կու գանք հաստատելու Գանատահայ համայնքին, որ մենք պիտի չչեղինք մեր ուղիէն, պիտի դիմադրաւենք մեր առջեւ ծառացող խո-չընդոտները եւ աննկուն կամքով պիտի շարունակենք մեր աշխատանքները մինչեւ Արցախեան հիմնահարցի խաղաղ լուծումը եւ Արցախի Հանրապետութեան ինքնորոշ-ման իրաւունքի ու անկախութեան միջազգային ճանաչումը։

ՀՅԴ Գանատայի Հայ Դատի Ծրջանային Յանձնախումբ

Գանատայի մարդկային իրաւանց թանգարանը եւ Հայոց ցեղասպանութեան թանգարանը ատորագրեցին փոխըմբռնման յուշագիր

(«Հորիզոն»).- Դեկտեմբեր 12-ին, Հայոց Յեղասպանութեան Թանգարանի գիտաժողովներու սրահին տեղի ունե-ցաւ Փոխըմբռնման յուշագրի ստորագ-րում «Հայոց ցեղասպանութեան թան-գարան-ինստիտուտ» հիմնադրամի – Գանատայի մարդկային իրաւանց թան-գարանի միջեւ։

Յուշագիրը ստորագրեցին «Հայոց ցեղասպանութեան Թանգարան-ինստի-տուտ» հիմնադրամի տնօրէն Յարութիւն Մարութեանը եւ Գանատայի մարդկային իրաւանց թանգարանի նա-խագահ Ճոն Եանկը։

Յուշագիրին մէջ կը նշուին կրթական, գիտական, թանգարանային համագործակցութեան, միջ-թանգարա-նային ծրագիրներու կազմակերպման եւ ցուցադրութիւններու փոխանակման կարելիութիւններուն մասին։

Յուշագրին համաձայն, կողմերը պարտաւոր են նաեւ պաշտօնական կայքէջերու վրայ տեղադրել իրենց գործունէութեան մասին տեղեկատուու-թիւն՝ գիտաժողովներու, գիտական ծրագրերու մասին յայտարարութիւն-ներ, համատեղ իրականացուած միջո-ցառումներու մասին լուսաբանումներ։

Փոխըմբռնման յուշագիրը ուժի մէջ է ստորագրելու պահէն սկսած՝ հինգ տարի ժամկետով։

Գանատայի Մարդկային իրաւանց թանգարանին մէջ կը ներկայացուին մարդկութեան դէմ գործուած ոճիրներու պատմականը, յատուկ շեշտ դնելով հրէ-ական, հայկական, ռուսական ցեղաս-պանութեանց, ուղղափառ սովասպա-

նութեան եւ Սրբաբնիկ քայի ջարդին վրայ։ Թանգարանը կը գտնուի Մանիթո-պա նահանգի Ուիննիպէկ քաղաքին մէջ։ 2007-ին, վարչապետ Հարփըր թանգա-րանը հռչակեց ազգային թանգարաննե-րուն շարքին գործող թանգարան։

Նշենք, որ Գանատայի Մարդկային իրաւանց թանգարանին մէջ Հայկական Յեղասպանութեան բաժանմունքի կա-ռուցման գծով, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի հրաւերով 2012-ին Մոնթրէալի եւ Թորոնթոյի հայ կեդրոն-ները այցելեցին Գանատայի Մարդկային իրաւանց թանգարանի հանրային յարա-բերութեանց պատասխանատու Անժելա Քասի եւ արխիւներու հետազոտութեանց բաժանմունքի վարիչ տոքթ. Քլինթ Քրըլ։ Պաշտօնական այս հանդիպումնե-րուն նպատակն էր գանատահայութեան համայնքային դեկլարար մարմիններու ներկայացուցիչներուն ծանօթացնել Մարդկային իրաւանց թանգարանին մասին։

Գանատայի Մարդկային իրաւանց թանգարանը կը գործակցի Գանատայի Հայ Դատի Յանձնախումբին եւ Զօրեան Հիմնարկին հետ։

Յուշագրի ստորագրումէն ետք եւ Գանատայի մարդկային իրաւանց թան-գարանի նախագահ Ճոն Եանկ այցելեց Հայոց ցեղասպանութեան յուշահամալիր եւ յարգեց Յեղասպանութեան զոհերու յիշատակը։ Ան նաեւ այցելեց Հայոց ցե-ղասպանութեան թանգարան, ուր ծանօ-թացաւ Հայոց ցեղասպանութիւնը հա-ւաստող վավերագրերուն ու փաստա-թուղթերուն։



ՆՈՐԻԶՈՆ

Միացէ՛ք «Հորիզոն»ի 2019-ի Հայաստան-Արցախ-Համշէն-Անի շրջապտոյտին

2019 Սեպտեմբեր 2-ին Ստեփանակերտի մէջ Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ միասին տօնենք Արցախի անկախութեան տարեդարձը

Օգոստոսի վերջին շաբաթէն մինչեւ Սեպտեմբերի առաջին շաբաթ

Տեսարժան վայրերուն մէջ ընդգրկուած են՝ Դաղիվանք, Գանձասար, Մեւանայ լիճ, Քարվաճառի անտառներ...

Այցելութիւն Հայկական Բանակի գօրանոց
Այցելութիւն Անիի պատմական հայկական տաճարներ
Այցելութիւն Համշէնի պատմամշակութային վայրեր...

Թոփչք, կեցութիւն, օրական երեք ժամ ուտեստեղէն ապահովուած | All Inclusive package

Մատչելի գիններ
Արձանագրուելու համար հեռաձայնել «Հորիզոն»ի գրասենեակ՝ 514 332-3757 թիւին

Ծնորհահանդէս «Հայ բժիշկներու, ատամնաբոյժներու եւ դեղագործներու ողիսականը Հայոց ցեղասպանութեան ընթացքին» գիրքին

21 Նոյեմբեր 2018-ի երեկոյեան, Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Ահարոնեան» սրահին մէջ, կազմակերպութեամբ Համազգայինի Մոնթրէալի «Սանահին» մասնաճիւղի Գրական յանձնախումբին, տեղի ունեցաւ բժիշկ Կարպիս Հարպոյեանի «Հայ բժիշկներու, ատամնաբոյժներու եւ դեղագործներու ողիսականը Հայոց ցեղասպանութեան ընթացքին» գիրքին շնորհահանդէսը:

Օրուան բեմավար տիկ. Նանոր Լիպարեան բարի գալուստի իր խօսքին մէջ յայտնեց, թէ գիրքը վաւերագրական արխիւային արժէք կը ներկայացնէ, որովհետեւ գիրքին աւարտին նշուած են ահագին աղբիւրներ, որոնց ուսումնասիրութեամբ մէջտեղ եկած է սոյն գիրքը:

Գեղարուեստական բաժինով հանդէս եկաւ քանոնահար Մեղրիկ Գանաձանակեան, որ նուազեց «Անահիտ» երաժշտական կտորը, որմէ ետք օրուան բեմավարուհին ներկայացուց բժիշկ Կարպիս Հարպոյեանի հակիրճ կենսագրականը:

Մըգկիլ համալսարանի առողջապահական կեդրոնին մէջ գործող բժիշկ Արի Մկրտիչեանի կենսագրականի ներկայացումէն ետք ան բեմ հրաւիրուեցաւ: Բժիշկը համապարփակ կերպով ներկայացուց գիրքը, ապա խօսքը փակեց յիշելով Յեղասպանութենէն ճողոպրած բոլոր այն ծնողները, որոնք թերեւս քիչ ուսում ստացած էին, ապրած էին ցեղասպանութենէն վերապրելու եւ աղքատութեան դառն պայմաններ, բայց եւ կրցած էին հասցնել բժիշկներ, ատամնաբոյժներ եւ ուսեալ սերունդ մը: Ան փակեց իր խօսքը մէջբերելով Հայրպոյեանի գիրքէն «Անոնց շնորհիւ է, որ այսօր մենք պատերէն կը կախենք մեր վկայականները» խօսքը:

Ապա Բժիշկ Հարպոյեան իր սրտի խօսքը, յուզումը, ուրախութիւնն ու երախտագիտութիւնը յայտնեց այս առթիւ, ապա պատասխանեց ներկաներու հարցումներուն:

Աւարտին բեմ հրաւիրուեցաւ Քեպէգի Հայ Բժիշկներու միութեան ներկայացուցիչ բժիշկ Սէրօ Անտոնեան, որ շնորհաւորեց բժիշկ Հարպոյեանը, ուրախութեամբ յայտնեց, թէ ան անդամ է միութեան, ապա մէջբերում մը ըրաւ գիրքին նախաբանէն ըսելով. «Մեր ճիտին պարտքն է չմոռնալ մեր նահատակ գործընկերները, հետապնդել մեր արդար դատը եւ մնալ պահանջատէր»:

Սոնա Թիթիզեան Կէտիկեան



Թորոնթոյի մէջ նշուեցաւ ՀՅԴ-ի 128-ամեակը

Կազմակերպութեամբ Թորոնթոյի ՀՅԴ «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի կողմէն, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 128-ամեակի տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Հայ կեդրոնի սրահէն ներս, Շաբաթ, 10 Նոյեմբեր 2018-ի երեկոյեան:

Օրուան հանդիսավար ընկՏ. Մարայ Զուլամեան իր բացման խօսքին մէջ անդրադարձաւ Դաշնակցութեան 128 տարուան գործունէութեան ու դերին, շեշտեց ունեցած համահայկական ներդրումին կարեւորութիւնը՝ ի խնդիր հայրենիքի կերտման, Հայ ժողովուրդի գոյատեւման եւ Հայ Դատի աշխատանքներուն յաջողութեան: Ընկերուհին նաեւ հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգելու յիշատակը մեզմէ առյաւէտ բաժնուած ընկեր-ընկերուհիներուն:

Ապա բեմ հրաւիրուեցան ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան «Ռոստոմ» մասնաճիւղի երիտասարդականի շարքերը փոխանցուող անդամները, որոնք երգեցին «Մեր հայրենիք» եւ «Մշակ, բանուոր» քայլերգները, ապա տուին իրենց խոստումը՝ միանալով ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան «Սիմոն Զաւարեան» մասնաճիւղին:

Անկէ ետք ՀՄԸՄ-ի փողերախումբին առաջնորդութեամբ երէց ընկեր ինչիկ Գանձապետեան եւ կրտսեր ընկեր Հրակ Մինասեան փոխանցեցին ջահը ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան Թորոնթոյի «Սիմոն Զաւարեան» մասնաճիւղի ատենապետ ընկ. Կարօ Գլըպոզեանին, եւ Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ ընկՏ. Վարդի Մութաֆեանին: Զահը կը խորհրդանշէ Դաշնակցութեան ճամբով

նոր սերունդին նուիրումը՝ ծառայելու հայ ժողովուրդին:

Օրուան հանդիսավարը հրաւիրեց Թորոնթոյի ՀՅԴ «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի անդամ ընկ. Սարգիս Աղպաշեանը, որ փոխանցէ օրուան պատգամը: Ընկերը անդրադառնալով Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 128 տարիներու ընթացքին տարած աշխատանքներուն՝ ըսաւ. «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր աւանդով, «Դէպի Երկիր» նշանաբանով, ազգային ազատագրական պայքարի ճամբով ու բիւրաւոր նահատակներ տալով կրցաւ հայ ազգի արդի պատմութիւնը կերտել: Վերջին յիսնամեակին մեր կուսակցութիւնը հսկայական աշխատանք տարաւ Հայ Դատի յանձնախումբերուն եւ գրասենեակներուն միջոցաւ, միջազգային հարթակի վրայ ճանչցնելու Հայոց ցեղասպանութիւնը: Արդէն տասնեակ երկիրներ պաշտօնապէս ճանչցած են Յեղասպանութիւնը, եւ մենք կը շարունակենք մեր երթը, մինչեւ Թուրքիոյ կողմէ ճանաչման ու վնասներու հատուցման իրականանալը»: Ան նաեւ կարեւորութեամբ շեշտեց. «Ոչ մէկ թիզ հող կը զիջինք արիւնով չաղախուած Արցախի ազատագրուած տարածաշրջաններէն: Եւ ինչ ալ ըլլան պարագաները, մենք կը մնանք միակամ ու պատրաստ՝ դիմագրաւելու որեւէ վտանգ, որ կրնայ սպառնալ մեր հայրենիքին»:

Աւարտին տեղի ունեցաւ խրախճանք, որուն ընթացքին ելոյթ ունեցաւ յատուկ Մոնթրէալէն հրաւիրուած յեղափոխական երգերու մեկնաբան Գօգօ Թիւթիւնճեանը, որ ազգային եւ յեղափոխական երգերով ճոխացուց մթնոլորտը:

Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ԲՈՒՆԻՉՈՒՆ»
յատագիրը կարելի է դիտել -

Շաբաթ առաւօտեան ժամը 9:00-10:00
Կիրակի առաւօտեան ժամը 6:00-7:00
Երեքշաբթի կէսօրոյ ժամը 12:00-1:00
Հինգշաբթի երեկոյեան ժամը 10:00-11:00

OMNI 1 կայանէն:

Այցելեցէք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝
www.sourphagop.org

Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com	Groupe Sutton - Performer Inc. 123 Place Frontenac Pointe-Claire, QC H9R 4Z7 ALBERT ARKILANIAN Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596 *certaines conditions s'appliquent	VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS GABRIEL Kevork Asadourian Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned kasadourian@gabriel.ca 7000, Henri-Bourassa E., Anjou (QC), H1G 6C4 Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967 www.nissangabriel.com • www.hondagabriel.com
École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II	Personal & Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan NATALIE SKAFF, CPA, CGA Comptable Professionnelle Agréée Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com Tel. (514) 963 3363 2866 Rue De Chamonix Saint-Laurent, Québec H4R 3B7 Services available in Armenian, Arabic, English and French	BRING YOUR OWN WINE NAZARETH CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com
SAMUEL TOPALIAN 450 682-1644 AUTO SAMSON MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.	ՀԱՅ ԲԱՐՈՒՆԵԱՆ Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000	NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Թորոնթոյի ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղի Տոհմիկ Օր Նուիրում՝ Հայոց Թագաւորական տոհմերուն



Կազմակերպութեամբ Հայ Օգնու-թեան Միութեան Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղին, Շաբաթ, 1 Դեկտեմբեր 2018-ի երեկոյեան, Հայ Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ 25-րդ Տոհմիկ Օրը, որ կը զուգադիպէր նաեւ Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակին: Հետեւաբար, Տոհմիկ Օրը նուիրուեցաւ Հայոց Պետականութեան հիմքը հանգիստացող Թագաւորական տոհմերուն՝ Ուրարտական կամ Վանի Թագաւորութեան, Արտաշէսեան, Արշակունեաց, Բագրատունեաց եւ Կիլիկիոյ Թագաւորութեանց: Ներկայ էին Հայ Առաքելական Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ Հոգ. Տէր Գեղարդ Ծ. Վարդապետ Քիւսպէքեան, Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս պրն. Արա Մկրտչեան, Օնթարիո նահանգի Խորհրդարանական երեսփոխան պրն. Արիս Պապիկեան եւ 400-է աւելի հաշուող հոծ բաղմութիւն:

Հայ Կեդրոնի սրահը պատշաճօրէն զարդարուած էր. սրահի դուռի բաժնի պատին վրայ տեղադրուած էր Հայաստանի քարտէսը՝ եզերքը բոլորուած հայոց 15 թագաւորներու պատկերներով, անոր քով գետեղուած պաստառին վրայ պատկերուած էին հինգ թագաւորութիւններու զինանշանները:

Սրահին մուտքին գետեղուած էր յաղթանակի կամար մը վրան Արտաշէսեան զինանշանով եւ յաւերժութեան նշանով: Սրահին պատերը եզերուած էին էրեքունի բերդի պատի որմանակարի երիզի պատկերով, իսկ բեմին պատին վրայ ուղղահայեաց իջած էին հինգ պաստառներ, իւրաքանչիւրը ներկայացնելով արքայական տոհմերէն մէկուն զինանշանը եւ ետեւի հեռանկարով՝ Մեծ ու Փոքր Մասիս լեռները:

Սեղաններուն կեդրոնը գետեղուած էր փայտի վրայ փորագրուած Հայաստանի զինանշանը եւ Օպսիդաքարի (Obsidian) վրայ դրօշը, որոնք Երեւանէն բերուած էին յատկապէս այդ օրուան համար: Սրահին մէկ անկիւնը յատկացուած էր թագաւոր- թագուհիներու նկարներու եւ Հայաստանէն բերուած իրերու ցուցադրութեան: Սեղան մըն ալ տրամադրուած էր Տոհմիկ Օրերու առթիւ հրատարակուած բոլոր գիրքերու ցուցադրութեան:

Հայկական տարագ հագած անդամներ սրահի մուտքին հրամցուցին

բալով պատրաստուած խմիչքը եւ ընկոյզով լեցուած արմաւենի: Իսկ սեղաններուն վրայ իւրաքանչիւր անձի համար տրամադրուած էր Հայաստանի դրօշով եւ զինանշանով պատրաստուած կուրծքի զարդասեղ մը:

Այս տարի կրկին գիրքի յանձնախումբը եւ ենթայանձնախումբը, երկար ամիսներու ուսումնասիրութիւններէ ետք, բժախնդիր աշխատանքով պատրաստած էին հայերէն եւ անգլերէն լեզուներով բովանդակալից եւ պատկերազարդ գիրք մը, որ ամփոփ ձեւով կը ներկայացնէր հայ ազգի ծագումին եւ հայոց արքայական տոհմերու 4000 տարուան հարուստ պատմութիւնը: Գիրքին խմբագրական կազմը կը բաղկանար երեք անդամներէ. Հուրի Նաճարեան, Զեփիւռ Տորնա եւ տղթ. Սօնա Բուշիկեան-Սարգիսեան:

Զեռնարկը սկսաւ գիրքի գինեձօնով: Յանձնախումբի փոխատենագետուհի Զեփիւռ Տորնա ներկաներուն բարի գալուստ մաղթելէ ետք հակիրճ կերպով ներկայացուց գիրքը եւ ըսաւ. «Յոյսով ենք, որ կ'ըմբռնենք այս բովանդակալից եւ երկլեզու գիրքը եւ զայն կը պահէք ու կը փոխանցէք եկող սերունդներուն, իբր Հայոց Պատմութեան եւ Հայոց Արքայական տոհմերուն, թագաւոր-թագուհիներուն մասին անմիջական եւ ամփոփ տեղեկութիւն: Կը մաղթենք, որ սոյն գիրքը կ'արժանանայ ձեր սիրոյն եւ գուրգուրանքին»: Ապա ան հրաւիրեց Տէր Գեղարդ Ծ. Վարդապետ Քիւսպէքեանը, որ կատարէ գիրքին գինեձօնը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Տոհմիկ Օրուան յանձնախումբի ատենապետուհի Հուրի Նաճարեան, որ ըսաւ. «Հայոց Պետականութեան վերականգնման 100-ամեակին առթիւ Հայոց Արքայական Տոհմերուն ձօնուած 25-րդ Տոհմիկ Օրը կու գայ աւելնալու հայաբոյր ձեռնարկներու այն շղթային, զոր Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղը շարունակաբար կը ներկայացնէ ժողովուրդին: Մեր մաղթանքն է, որ 25 օղակները տարուէ տարի աւելնան եւ հասնին 50-ի ու աւելին... Սիրելիներ, այսօր դուք ստացաք այս տարուան գիրքէն օրինակ մը, որ իր մէջ կը պարփակէ հայ ժողովուրդին պատմութիւնը իր ծագումէն մինչեւ վերջին թագաւորութիւն՝ Հայոց Պետականութեան վե-

րականգնումը, որ 100 տարիներ առաջ, ազգովին ոտքի կանգնած, միասնաբար կերտեցինք, առաջնորդութեամբ Արամ Մանուկեանի.... Կ'ողջունենք Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակը, թող որ մեր 4000-ամեայ պատմութիւնը ըլլայ այն հիմնաքարը, որուն վրայ պիտի կառուցենք դէպի ապագայ մեր հայրենիքը՝ արդար, հզօր ու բարգաւաճ: Կ'ողջունենք նաեւ մեր մայրաքաղաք Երեւանի 2800-ամեակը.... թող որ Երեւանը միշտ ծաղկի եւ զարգանայ:

Յարգանք ու պատիւ մեր պատմութեան էջերը կերտող հայոց թագաւորական տոհմերուն, որոնք մեզի պարգեւեցին միաձոյլ ու հայալեզու ծովէ ծով Հայաստան, փառքի օրեր, ուրոյն մշակոյթ, կրօնք եւ հայոց ռազմապետական կամքը: Թո՛ղ որ Մեծն Տիգրանի աննկուն կամքը, քաղաքական ռազմավարական ոգին եւ արդարամիտ պայծառութիւնը, առաջնորդող եւ օրինակելի ուժը հանգիստանայ ապագայ բարգաւաճ եւ հզօր հայրենիքի կերտման գործընթացքին... Թո՛ղ որ Փառանձեմ, Զապէլ եւ Աշխէն թագուհիներու կեանքը օրինակելի դառնայ հայ կնոջ, հայ մօր՝ ազգային ոգիով դաստիարակելու մեր գալիք սերունդները, անոնց փոխանցելով ազգին ծառայելու եւ հայրենիքը պահպանելու վսեմ գաղափարը: Ծառը իր արմատներով կը սնանի ու կանգուն կը մնայ, մե՛նք ալ սիրելիներ, մեր պատմութեամբ է, որ պիտի հզօրանանք, հոգիով ու կամքով տոգորուած պահենք մեր ինքնութիւնը, հայու ոգին հաւատքն ու լեզուն»: Ան խօսքը վերջացուց շնորհակալութիւն յայտնելով անցեալի եւ այս տարուան Տոհմիկ Օրերու յանձնախումբերուն, բոլոր նուիրատուներուն եւ կամաւոր օժանդակներուն:

Յայտագրին կարեւոր մէկ մասը կը կազմէր Երեւանի Տէրեան Մշակութային Կեդրոնի Արքայական եւ Ազգային տարազներու աննախընթաց ցուցադրութիւնը Թորոնթոյի մէջ: Տէրեան Մշակութային Կեդրոնը սիրալոթար հայթայթած էր բոլոր տարազները: Ցուցադրութիւնը համադրեցին Թամար Մաթոսեանը եւ Մարալ Պէքարեանը, իսկ զանոնք ներկայացուց Թամար Մաթոսեանը: Գաղութիւն խումբ մը երիտասարդ եւ երիտասարդուհիներ գեղեցկօրէն ցուցադրեցին արքայական եւ ազգային տարազները, որոնցմէ իւրաքանչիւրը ձեւաւորուած եւ պատրաստուած էր իւրայատուկ ձեւադրոներով:

Համազգայինի «Գլաձոր» մասնաճիւղի «էրեքունի» պարախումբը, ղեկավարութեամբ՝ Նելլի Կարապետեանի, յայտագիրը ճոխացուց ներկայացնելով երկու պար՝ «Հայկազուններ» եւ «Տաւիղ»:

Ապա, կազմակերպիչ յանձնախումբին անունով Տիանա Հանրմեան յայտնեց, թէ առ ի գնահատանք Տոհմիկ Օրերու մղիչ ուժը եղող Հուրի Նաճարեանի նուիրեալ աշխատանքին, Հայաստանի Ծառատնկումի Ծրագրին (Armenia Tree Project – ATP) միջոցով իր անունին խումբ մը ծառեր պիտի տնկուին հայրենիքի մէջ: Իսկ մասնաճիւղին անունով Իրեն Թիլիմեան անոր յանձնեց գնահատագիր մը եւ նուիրեց Մայքըլ Արամի գործերէն մէկը:

Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս պատուարժան պրն. Արա Մկրտչեան հրաւիրուեցաւ մասնաճիւղի ատենապետուհի Իրեն Թիլիմեանի եւ Հուրի Նաճարեանի հետ հատելու 25-ամեակի կարկանդակը, որ բերդի ձեւով պատրաստուած էր:

Ապա պրն. Մկրտչեան խօսք առնելով մեծապէս գնահատեց ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղի ձեռնարկած աշխատանքները, յատկապէս Տոհմիկ Օրերու ձեռնարկները, որոնք կը հանդիսանան հայ մշակոյթի ու պատմութեան պահպանումի կարեւոր աշխատանք:

Տէր Գեղարդ Ծ. Վարդապետ Քիւսպէքեան իր սրտի խօսքով հանդէս եկաւ, շնորհաւորեց Տոհմիկ Օրերու 25-ամեակը եւ յայտնեց, թէ ինչպէ՛ս հայոց թագաւորութիւններու ընդմէջէն փառքի զգացումը եւ հզօրութեան ոգին կը փոխանցուի մեր ժողովուրդին մինչեւ այսօր: Ապա օրհնեց սեղանները: Ներկաները ճաշակեցին հայկական համադամ ճաշերը, յատկապէս նշանաւոր աւանդական դափաման, որ հրամցուեցաւ «Ղափամա» երգի ընկերակցութեամբ:

Ճաշի ընթացքին պաստառի վրայ ցուցադրուեցաւ 25 տարիներու Տոհմիկ Օրերու ձեռնարկներէն համադրում մը՝ պատրաստուած Օննիկ Նազարեանցի կողմէ: Բեմ բարձրացաւ Մոնթրէալէն յատկապէս ժամանած էլի Պէրպէրեանը, իր նուագախումբին հետ եւ հանդէս եկաւ աշուղական եւ հայրենասիրական երգերով:

Զեփիւռ Տորնա

Համացացանցի վրայ
Երկիր Մետիայի
«Երկիրն այսօր» ծրագրի լուրերը
համակարգչային պատկերասփռումով
դիտելու համար այցելեցէ՛ք

www.yerkirmedia.am



Ընդդիմութեան դաշտին կազմաւորումը, կամ՝ Զախակողմեան այլընտրանքը Ազգային Ժողովէն դուրս

Հ. Յ. Դաշնակցութեան ցանկին վրայ Ազգային Ժողովի պատգամաւորի թեկնածու Արթուր Խաչատրեան ընտրարշաւի ժամանակ առիթով մը հարցազրոյցի մը մէջ ըսած է, թէ շատ դժուար էր Աջ կառավարութեան մը մէջ Զախ ըլլալ։ Խաչատուրեան այն քիչերէն է հայկական իրականութեան մէջ Ընկերվար Միջազգայնականի միակ անդամ կուսակցութեան հանրածանօթ դէմքերէն, որ Դաշնակցութեան գաղափարախօսական ինքնութիւնը պարզ ու մէկին բանաձեւած է որպէս «Զախ»։

Մանօթ է, որ Նիկոլ Փաշինեանին վարչապետական աթոռին վրայ պահելու եւ Ազգային Ժողովին մէջ «Իմ քայլը» ընտրական դաշինքին բացարձակ մեծամասնութիւն տալու նպատակով հապճեպօրէն կազմակերպուած ընտրութիւններուն մասնակցելու համար Հ. Յ. Դաշնակցութեան հայաստանեան ղեկավարութիւնը շեշտը դրաւ մասնաւորաբար Արցախի եւ ազգային անվտանգութեան հիմնախնդիրներուն վրայ եւ սոցիալական արդարութեան կապուած հարցերը նշուեցան մէջընդմէջ եւ ընդհանրապէս առնչակից այս երկուքին։ Որքան ալ որ «Թաւշեայ յեղափոխութեամբ» խանդավառ հայրենի ընտրազանգուածը, ի մասնաւորի՝ ընտրութիւններու արդիւնքին վրայ որոշիչ անդրադարձ ունեցող երեւանի բնակչութիւնը, շատ աւելի ականջալուր ըլլար իր կենսամակարդակի բարելաւման խոստումներուն, հասկնալիօրէն տրամադրուած ըլլար նախկին իշխանութիւններուն փտածութեան պարագաներու դատապարտման յանձնառութեան պատգամներ լսելու եւ թեկնածուներուն մէջ փնտելը նոր դէմքեր, որոնք պիտի փոխարինեն ժողովուրդի զօրաշարժի կառողութիւնը ընդհանրապէս արհամարհած եւ օլիկարդներու առանձնաշնորհումներուն հետ ճիշդ թէ երեւակայական կամ կամայականօրէն առնչուած քաղաքական ղեկավարներուն, Հ. Յ. Դաշնակցութեան ընտրարշաւի ընդհանուր ուղղուածութեան թեմաթիկ առաջնահերթութիւնը այսօր հարցականի տակ դնելը անիմաստ է։ Ընդհակառակը, երանի Արցախի հարցով Հ. Յ. Դաշնակցութեան հնչեցուցած զգուշացումները, որոնք անիրաւօրէն սոցիալական ցանցերուն մէջ երբեմն որակուեցան որպէս «չարաչահութիւն», արձանագրուին երկրին ղեկը ստանձնելու պատրաստուող իշխանութեան գիտակցութեան մէջ, որպէսզի ոչ միայն բացառուին պարտուողական վտանգաւոր միտումները, որոնք միշտ կը սկսին հայկական կողմէն ազատագրուած տարածքներու զիջումի տրամադրուածութեամբ՝ առանց երբեք անոր փոխադարձումը յստակօրէն իմանալու, այլեւ սրբագրուին անցնող քսան տարիներու սխալներն ու դիւանագիտական ետքայլերը, ի մասնաւորի՝ բանակցութեան սեղան վերադարձնելով Արցախի ներկայացուցիչները եւ չէզոքացնելու Մատրիտեան սկզբունքներու եւ անոնց ամէն չափի ու որակի հետեւումով գոյացած փաստաթուղթերու ներհակ սպառնալիքը։

Բայց ընտրութիւնները պատմական անկիւնադարձ մը արձանագրած են արդէն, «Թաւշեայ յեղափոխութիւնը» հասաւ իր լրումին եւ բառին ամբողջական իմաստով նոր ժամանակաշրջան մը կը սկսի Հանրապետութեան համար։ Առնուազն նոր են Ազգային Ժողովի պատգամաւորներուն մեծամասնութեան դէմքերը եւ այդ քիչ բան չէ ընտրութիւնները նկատելու որպէս ժամանակահատուածի աւարտը եւ ուրիշի մը սկիզբը։ Դժուար է նաեւ ընտրարշաւի առարկայական գնահատական մը տալ։ Թէ բացառուեցան անցեալի փտածութեան մեխանիզմները եւ ընտրութիւններու կաշառքի բաժանումը քուէի փոխարէն՝ անկասկած, եւ այդ ալ նոր եւ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան որակի համար նոր սկիզբ մը կը նշանակէ։ Բայց իր հապճեպութեան պատճառով այս ընտրարշաւը տրամաբանականօրէն կեդրոնացաւ ոչ թէ վերջին, այսինքն՝ «Թաւշեայ յեղափոխութեան» յաջորդած իշխանութեան գործուէնութեան գնահատման, այլ՝ համաժողովրդային շարժումի ճնշումով իշխանութենէ հեռացած քաղաքական ուժերուն քաղաքական ասպարէզ վերադարձը բացառելու նպատակին վրայ։ Շատ պարզացնելով կարելի է ըսել մէկ կողմէն փտածութեան վերացման յանձնառութեան դրօշակիրներն էին, միւս կողմէ ազգային արժեհամակարգին եւ անվտանգութեան սպառնացող վտանգներէն զգուշացնողները։ Հ. Յ. Դաշնակցութեան կարգ մը թեկնածուներու կողքին Քաղաքացիական Որոշումն էր այն նորայայտ ուժը որ բացայայտօրէն եւ բառացիօրէն խօսեցաւ որպէս սոցիալ-դեմոկրատական այլընտրանք եւ փորձեց հարստութեան վերաբաշխումի եւ տնտեսական որոշումներու կայացման կարգի ժողովրդավարացումը օրակարգի վրայ դնել։

Ընտրարշաւի ելած քաղաքական ուժերու գաղափարախօսական ջրբաժանման փորձի այս նախաձեռն

նութենէն անկախ, երկրի ու հասարակարգի աշխարհահայեացքներու ողջունելի բախում տեղի չունեցաւ։ Կարելի է մինչեւ իսկ ըսել, որ ընտրարշաւը հիմնականօրէն զարգացաւ թեկնածուներու անձնական ժողովրդականութեան ազգակի հիման վրայ, ուր բնականաբար Նիկոլ Փաշինեան ունէր մրցակցային բացարձակ առաւելութիւն միւս բոլոր թեկնածուներուն բաղդատած։ «Իմ քայլը», հետեւաբար, այսօր Նիկոլ Փաշինեանն է ու վերջ, այդ ցանկին մաս կազմող թեկնածուները իրենց յաջողութիւնը աւելի շատ կը պարտին Վարչապետի «Աւուրա»յին քան իրենց քաղաքական գործիչի փորձառութեան կամ կարողութեան։ Երեւոյթը իւրայայտուկ չէ Հայաստանի, ուր քաղաքական կուսակցութիւնները կայացած չեն. համաշխարհային մասշտաբով ընդհանրապէս ժողովրդավարութեան ընդհանուր «չորդնածութիւն» մը նկատելի է, որ ամենէն աւելի կ'արտայայտուի քաղաքական կուսակցութիւններու ժողովրդականութեան տագնապով։ Ընդ որում հրապարակ կու գան նոր դէմքեր որոնց չուրջ կը կազմուին քաղաքական խմբաւորումներ առանց երբեք քաղաքական կայուն կուսակցութիւն մը ըլլալու նպատակն իսկ ունենալու եւ իրենց նեցուկը փնտռելով հասարակական կազմակերպութիւններու եւ աւելի յաճախ՝ կրօնական հաստատութիւններու զօրաշարժին մօտ։ Քաղաքագէտներ մինչեւ իսկ այս երեւոյթը տեսականօրէն բանաձեւած են որպէս «յետ-քաղաքականութիւն»։

Դեկտեմբեր 9, 2018–ի ընտրութիւնները նաեւ միջազգային մամուլին կողմէ ողջունուեցան որպէս ժողովրդավարութեան յաղթանակ, այնպէս ինչպէս «Թաւշեայ յեղափոխութիւնը» ամբողջատիրական ձգտումներու գտած ժողովրդականութեան համաշխարհային երեւոյթին մէջ նկատուեցաւ ժողովրդավարութեան, օրէնքի իշխանութեան եւ մարդկային իրաւանց յարգանքի յանձնառութեան յուսադրիչ իրադարձութիւն։ Բայց Ազգային Ժողովի գումարման սկիզբի առաջին օրէն իսկ ժողովրդավարութեան որակի այս ուստումին դիմաց պիտի ցցուի անցեալի հիմնական մարտահրաւէրը. «Իմ քայլ»ին ձեռք բերած բացարձակ մեծամասնութիւնը որով եւ կառավարութեան որոշումները առանց շատ քննադատութեան, թրեւս մինչեւ իսկ՝ վերահսկողութեան, պիտի վաւերացուին, օրինականացուին եւ ներկայացուին որպէս ժողովրդային կամքի արտայայտութիւն։ Լաւագոյն պարագային կը յուսացուի ատենին Նիկոլ Փաշինեանի մը կամ իրմէ առաջ՝ Վահան Յովհաննէսեանի մը համարձակութեամբ ձայն մը լսել, որ, ամէն պարագայի, պիտի չէզոքանայ մեծամասնութեան քուէներով։ Նախքան այս երեւոյթին իշխանութեան կեդրոնացում կարողականօրէն ուշալ որակաւորումը տալը՝ արդար կ'ըլլայ նաեւ նկատել, որ անոր առաջն առնելու կարելիութիւնը կայ եւ մեծ մասամբ, չըսելու համար բացառաբար կախում պիտի ունենայ նոյնինքն Վարչապետին՝ բացարձակ իշխանութեան հմայքին դիմադրելու կամեցողութենէն կամ գժուակամութենէն։ Կանուխ է նաեւ կանխագուշակումներ ընելու, որ «Իմ քայլը» կերպարանափոխուած ՀՀԿ–ն է, եւ եղածը «չէֆ»ի մը փոփոխութիւնն է։ Բայց տեսականօրէն ամէն անվերահսկելի մեծամասնութիւն, այս պարագային՝ ուշալ ընդդիմութեան բացակայութիւն, կարողականօրէն իշխանութեան կեդրոնացման կ'առաջնորդէ։ Մեծամասնութեան պատգամաւորներուն քաղաքական «անփորձութիւնը» չէ հարցը, բայց յստակ է, որ մինչեւ որ անոնցմէ իւրաքանչիւրը ինքզինք հաստատագրէ, բոլորն ալ իրենց ընտրութեան համար «պարտաւոր» են Նիկոլ Փաշինեանին, որուն որպէս Վարչապետի, այսինքն՝ Գործադիր Մարմնի ղեկավարի, առած որոշումներուն ընդդիմանալու բարոյական լուրջ սահմանափակումներ պիտի ունենան սկիզբը։ Յետոյ ամէն ինչ կախեալ է «Իմ Քայլ»ի զարգացումէն. պիտի մնա՞ր ընտրական դաշինք, թէ՞ ծնունդ պիտի տայ քաղաքական տարբեր կուսակցութիւններու, կամ մի գուցէ նոյնանայ Փաշինեանի Քաղաքացիական Պայմանագիրին հետ։

Ինչ որ, սակայն, ամենէն աւելի մտահոգիչն է Ազգային Ժողովէն ներս քաղաքական ուժերու գաղափարական տարբերութեան բացակայութիւնն է։ Խօսքը կը վերաբերի տնտեսական եւ սոցիալական քաղաքականութեան տարբեր աշխարհահայեացքներու, որոնք «Աջ»ի եւ «Զախ»ի հիմնական տարբերութիւնը կ'իմաստաւորեն հարստութեան վերաբաշխումի եւ սոցիալական ապահովութեան կռուան–հաստատութիւններու ստեղծման մէջ պետութեան դերակատարութիւնը, սկսելով հարկային դրութենէն։ Նախքան այս երեւոյթին վերլուծումը, յստականցնենք երկու կէտ։

Առաջին, անցնող քսան տարիներուն Ազգային Ժողովին մէջ Հ. Յ. Դաշնակցութեան ներկայութիւնը որպէս ընկերվարական կուսակցութիւն անպայմանօրէն

չէ նշանակած, որ Զախի այլընտրանքը տիրական ներկայութիւն ըլլայ։ «Կոալիցիոն» կառավարութեան թէ Հանրապետականի հետ միջ–կուսակցական համաձայնագրի «պարտագիր կոնսենսուս»ները թոյլ չտուին, որ Դաշնակցութեան ընկերվարական պահանջները հնչեն այնքան զօրաւոր որ յստակօրէն տարբերուին իշխանութեան նէօլիպերալ աշխարհահայեացքէն եւ ընտրող քաղաքացիներուն գիտակցութեան մէջ տեղադրուին որպէս այլընտրանք։ Այս չի նշանակեր, որ իր ընտրական պլատֆորմերով թէ Ազգային Ժողովի իր պատգամաւորներու ելոյթներու եւ ներկայացուցած ծրագիրներուն ընդմէջէն Դաշնակցութեան սոցիալական արդարութեւնը յանձնառութիւնը բացայայտ չէ դարձած։ Բայց քանի որ իշխող քաղաքական ուժը օլիկարգային մենաշնորհներու պահպանման երաշխաւորի դերը ստանձնած էր ամէն պարագայի այդ առաջարկները քուէարկութեան ժամանակ կը ձախողէին… Լաւագոյն փաստը նախքան իշխանափոխութիւն Դաշնակցական պատգամաւորներու փորձն էր ընտրական օրէնքէն վատառողջ «ռէյտինգային»ի վերացումը, ինչ որ կտրուկօրէն մերժուեցաւ Հանրապետականին կողմէ, պարզապէս որովհետեւ «ռէյտինգային»ը թոյլ կու տար մենաշնորհներու կապիտալի ներկայացուցիչներու՝ մուծելու այն գումարը, որ անհրաժեշտ է պատգամաւորի առաւելութիւններն ու «սթաթուս»ը ունենալու համար, առանց, բնականաբար իրենց «պիզնէս»էն թէ հաճոյքէն հրաժարելու՝ մասնակից ըլլալու համար Ազգային Ժողովի նիստերուն։ Ի վերջոյ այդ մարդիկը աւելի պարտական էին համակարգին, քան իրենց ընտրող ժողովուրդին… Իրողութիւն է նաեւ, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը առաջնահերթութիւն տուաւ ազգային հարցերուն եւ այդ մէկը լիովին արդարացուեցաւ ի դէմս կոալիցիոնի աւագ գործընկերներու ղեկավարի «Ֆուլթոնային դիւանագիտութեան» արկածախնդրութեան։

Երկրորդ կէտը «Զախ»ի հասկացողութիւնն է, որ իր պատմական զարգացման հոլովոյթով 20–րդ դարու վերջին քառորդէն սկսեալ դադրեցաւ հիմնականօրէն հարստութեան արդար վերաբաշխումի նպատակը հետապնելէ իր օրակարգին մէջ ընդգրկելով մարդկային իրաւունքներ, բնապահպանում եւ փոքրամասնութիւններու իրաւունք։ Այս իմաստով Ազգային Ժողովի ներկայ մեծամասնութիւնը կրնայ նախաձեռնողը ըլլալ այս բոլոր հարցերը օրակարգի բերելու, եւ ի տարբերութիւն նախորդ իշխանութիւններու, որոնք եթէ նոյնիսկ անդրադարձած էին այս հարցերուն յաւուր պատշաճի ձեւականութեամբ միջազգային համաձայնութիւններու պարտաւորումները յարգելու համար, անոնց տալ բովանդակային լիցք։ Նման զարգացումներու նախանշանները երեւան ելան «Թաւշեայ յեղափոխութենէն» յետոյ եւ ընտրապայքարի ժամանակ։ Սկզբունքով այս բոլոր հարցերը մաս կը կազմեն շատ աւելի «սոցիալական լիպերալիզմ»ի օրակարգին եւ «Աջ»ի թէ «Զախ»ի գաղափարախօսական եւ աշխարհահայեացքային բաժանման գիծ մը չեն նշանակեր։ Զախը սկզբունքով այս հարցերու քննարկման եւ իրաւունքներու ընդլայնման իմաստով խնդիր պէտք չէ ունենայ։ Ի մասնաւորի Զախի սոցիալ–դեմոկրատական ուղղուածութիւնն ու վերջին երկու տասնամեակին անկէ ծնունդ առած աւելի արմատական ժողովրդային զօրաշարժերը։ Իրաւունքներու ընդլայնումն ու ամրագրումը լիպերալիզմի ամենասկզբնական եւ ամենասկզբունքային մեկնակէտն է ընդդէմ աւատապետական եւ կրօնական խաւարամտութեան, այն ինչ թրեւս աւելի ճիշդ կ'ըլլայ թարգմանել որպէս «ազատամտութիւն» եւ «ազատականութիւն» որպէս հասարակական եւ քաղաքական ծրագիր։ Ի վերջոյ Զախի նախաձեռնութիւնը այլ բան չէր քան քաղաքական ազատականութեան էթիկան ընդլայնել ընդգրկելու համար աշխատաւորական իրաւունքներն ալ, ինչ որ արդէն դրամատիրութեան վտանգ նշանակեց եւ, հետեւաբար, տնտեսական լիպերալիզմէն տարբերեցաւ։ Այս հարցերը եթէ ներազգային քաղաքական օրակագին գան անոնց բաժանման գիծը պահպանողականութիւնն ու յառաջդիմականութիւնը պիտի ըլլայ, «ազգային» եւ «համամարդկային» արժէքներու բախումը կամ, եթէ քաղաքական հասունութիւնը գերակշռէ, անոնց համադրման ճիգը ի խնդիր համաձայնական/համերաշխական լուծումներու։ 1980–ականներու աւարտէն ի վեր սոցիալ–դեմոկրատական Զախին գլխաւոր… ձախաւերութիւնը եղաւ գիծիլ հարստութեան վերաբաշխումի իր սկզբունքէն եւ տեղի տալ նէօլիպերալիզմի յառաջնթացին առջեւ, որով եւ «Զախակողմեան» ըլլալը հաւասարեցաւ Թոնի Պլէյրեան

Խ. Տէր Ղուկասեան

Ընդդիմութեան… Ծար. էջ 14



Specializing in pistachio, cashew, almond, walnut, and hazelnut baklava & other regional pastries and sweet. Everything is hand-made from scratch, using the finest ingredients and prepared fresh daily.

2086 Lawrence Ave. East | Scarborough, ON | Tel: (647) 351-2015
NEW LOCATION: 5083 Dixie Road, Unit D3, Mississauga | ON L4W 0E6 | Tel: (905) 602-2018
www.crownpastriesbaklava.com



CONNU POUR LE MEILLEUR SOUVLAKI ET GYRO EN VILLE !
 KNOWN FOR THE BEST SOUVLAKI & GYRO IN TOWN!



Special of the day with coffee and dessert
 Monday to Friday \$9.95 11am – 4pm
 Saturday and Sunday \$10.95 11am - 4pm

4491, boul. Samson, Chomedey, Laval
Tel: 450 681-3333

Dim. à mer. : 11h à 11h Sun. - Wed. 11am - 11pm
 Jeudi à sam. : 11h à minuit Thurs. - Sat. 11am - midnight

KORONA հաստատությունը հիմնուած է 1964-ին, Մոնթրէալի մէջ, Մայք Թորոսեանի կողմէ: 2 տարիէ ի վեր փոխադրուած է Լաւալ ասեւի մեծ, շքեղ եւ արդիականացած վայրի մը մէջ: Այժմ տնօրէնութիւնը ստանձնած է Տանիէլը Մայք Թորոսեանի տղան: Մայքը եւ Տանիէլը ուրախութեամբ պատրաստ են մեր գաղութին մատուցելու լաւագոյն ծառայութիւն:



Տանիէլը 15 տարուան փորձառութիւն ունի աղամանդի, ոսկեղէնի, մարգարիտներու, գոյգերիական ժամացոյցներու առուծախի: Մեր հաստատութիւնը միշտ եղած է եւ պիտի մնայ ընտանեկան միակ վստահելի վաճառատունը:

Կը վստահեցնենք ձեզ, որ Նոր Տարուան եւ տօնական բոլոր օրերուն, ձեր ճաշակին համաձայն, կատարեալ գոհացում կրնաք գտնել մեր քով: Տօնական օրերուն առթիւ ընդունեցէք նաեւ մեր լաւագոյն բարեմաղթութիւնները:



Ազնուագոյն նուէրը՝ բարձրորակ աղամանդներ...


KORONA
JOAILLIERS • 1964 • JEWELLERS

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

3933 St Martin O. Coin Curé-Labelle Laval, Qc. | 514-274-5555 | 450-688-5515 | korona.ca



**Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.**
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1



T 450 688-4111
F 450 681-5525
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h
Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկություն մինչև ձեր տունը.
Շաբաթական դեղատուփիկի պատրաստություն.
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)
այլ դեղարանէ. Դեղերու պատուաստում
(vaccination) հիւանդապահի կողմէ.

Բուժական հետեւում՝
արեան բարակութեան (INR), շնչերակային
ճնշման (tension artérielle), արեան շաքարի
(glycémie capillaire), արեան մաղձաճարպի
(cholesterol), եւն.



Résidence pour
aînés autonomes
et semi-autonomes



À partir de **995\$** (après crédit d'impôt)
Tous les repas, collations et supervision
médicale inclus
1½ à 4½



Gicleurs automatiques
dans chaque appartement



Մեկը հոս ուրախ եկը
Պրն. Իբեկեան

Պատահա՞ց Տեղի՞ Կ'ուզենա՞յ
ձեր ՀԱՆՁՆԱՏԵԼՆ ՏՈՒՆԷՆ ՆԵՐԱ՝

Il n'y a pas d'âge pour être heureux!



12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com

**Շնորհալուր
Նոր Տարի եւ Ս. Ծնունդ**



ALBERT ARKILANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

aarkilanian@sutton.com

Cell: 514.962.8822

Bur: 514.426.9595

Fax: 514.426.9596



**Satisfaction garantie ou je revends
votre propriété gratuitement!***

*certaines conditions s'appliquent

Ի՞նչ Ընդդիմութիւն...

ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւնները վերջ գտան եւ երեք քաղաքական ուժեր այժմ կը բաժնեն իրենց միջեւ օրէնսդիր իշխանութեան աթոռներու ամբողջութիւնը Նիկոլ Փաշինեանի «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան տալով գերիշխող ուժի անվիճելի հանգամանքը:

Այժմ ՀՀ Ազգային ժողովը կը գտնուի Նիկոլ Փաշինեանի կուսակցութեան միահեծան տիրապետութեան տակ ՀՀ քուէարկողներու 48 տոկոսի մասնակցային կտրուածքով միայն իրականացած ընտրութիւններուն որպէս արդիւնք: Այսօր յստակ է, որ ՀՀ յաջորդ վարչապետը Նիկոլ Փաշինեանն է ըլլալու եւ բնական է, որ երկրի բոլոր քաղաքական ուժերը – եւ յատկապէս անոնք, որոնք դուրս մնացած են Ազգային ժողովէն – բարոյական պարտաւորութիւնը ունին իրենց համագործակցութիւնը խոստանալու ՀՀ Ազգային ժողովին եւ ՀՀ վարչապետին: Բայց ինչպէ՞ս:

ՀՀ Սահմանադրութիւնը իմաստուն նախատեսութեամբ կարեւոր դերակատարութիւն սահմանած է խորհրդարանի փոքրամասնութեան: Սահմանադրութիւնը խորհրդարանի գործունէութիւնը կը պայմանաւորէ փոքրամասնական թեւի երաշխաւորուած նուազագոյն մէկ երրորդով: Սահմանադրութեան յստակ դիտաւորութիւնն է կանխել բոլոր բեւեռացումները խորհրդարանի ուժերու դասաւորման մէջ: Դժբախտաբար այս մէկը դեռ լայնօրէն չփորձուած գետին է ՀՀ քաղաքական բեմին վրայ: Իսկ սահմանափակ փորձը ցոյց տուաւ, որ սահմանադրական այս տրամադրութիւնը բաւարար երաշխիք չէր բեւեռացման

երեւոյթը, ըստ էութեան, կանխելու: Այս ճախողութեան առաջին մեղապարտը նախորդ իշխանութեան մեծամասնական թեւի ղեկավարներն էին եւ, առաջին հերթին, նախկին ՀՀ նախագահը՝ Ի՛նք: Այսօր սակայն ետ նայելու կարիքը չունինք, քանի որ նոյնքան եւ աւելի ճնշիչ չափերով նոյն երեւոյթն է, որ կը բեմադրուի խորհրդարանի ներքին քաղաքական հարթակին վրայ:

Բոլոր երեւոյթները ցոյց կու տան, որ «Քաղաքացիական Պայմանագիր» (ՔՊ) եւ «Լուսաւոր Հայաստան» կուսակցութիւնները (ԼՀ) նոյն ծառին պտուղներն են եւ կը գործեն ընդհանրապէս նոյն քաղաքական ներշնչումով, իսկ «Բարգաւաճ Հայաստան» Կուսակցութիւնը՝ ՔՊի քաղաքական սերտ ուղեկիցն է այժմ եւ փաստօրէն այլ բան չի կրնար ըլլալ Ազգային ժողովի ուժերու ներկայ դասաւորման մէջ: Հետեւաբար վաղուան վարչապետը չունի իրական ընդդիմութիւն Ազգային ժողովին մէջ (ի՞նչ կարուձեւի ալ, որ փորձեն ենթարկել ներկայ պատկերը): Այս ընտրութիւններէն ետք, աւելի եւս յստակ է, որ այս խորհրդարանով մենք այլեւս չունինք խորհրդարանական համակարգ: Մենք ունինք de facto նախագահական համակարգ այս իրողութեան բոլոր ակնյայտ հետեւանքներով:

Անշուշտ հնարաւոր չէ նախատեսել, թէ յաջորդ վարչապետը ինչպէ՞ս կը կարողանայ ձեւաւորել իր յարաբերութիւնները Ազգային ժողովի միւս կուսակցութեանց հետ: Ինչպէ՞ս կը կազմակերպէ ներքին միութիւնը եւ պարոնայք Մառուկեան եւ Մարուքեան Ի՛նչ չափով եւ ինչպէ՞ս կը համադրուին վարչապետ

Փաշինեանի մեծամասնական քաղաքականութեան հետ: Այս բոլորը կը գտնուին ապագային մէջ: Այսօր մեր խնդիրն է հասկնալ, թէ ի՞նչ են ներկայիս փոքրամասնութեան իրական հնարաւորութիւնները եւ վաղուան վարչապետին իրական փոխընտրութիւնները:

Պէտք է անկեղծօրէն ընդգծենք, որ Փաշինեան իշխանութեան կու գայ բոլորովին անսովոր պայմաններու մէջ: Յեղափոխութի՛ւն կամ ոչ՝ ինք իշխանութեան տիրացաւ շնորհիւ ժողովրդային շարժման մը ստեղծած ալեկոծութեան, որուն առջեւ (ըսենք՝ խորհրդաւոր պայմաններու մէջ) յանկարծ տեղի տուաւ օրուան նախագահը եւ իշխանութիւնը de facto անցաւ պր. Փաշինեանին: Այսօր արդէն անցած են չփոթի այդ փուլերը եւ ներկայ խորհրդարանի գրեթէ ամբողջութեան զօրակցութիւնը վայելող վաղուան վարչապետը հանդէս պիտի գայ չօշափելի մէկ քաղաքական ծրագրով: Ասկէ անդին, ոչ ոք կրնայ ընդունիլ նախկինը պարսաւելու որեւէ ուշացած հռետորաբանութիւն: Ասկէ անդին, պիտի խօսի միայն պր. Փաշինեանի յառաջիկայ կառավարութեան գործը եւ այդ գործը չի կրնար ըլլալ նախկինի շարունակութիւնը: Ասկէ անդին, վարչապետ Փաշինեան էապէս մէկ բան միայն ունի ընելիք, որպէսզի կարողանայ հաւատարիմ մնալ իր խոստումներուն: ԻԻՐԱՅՆԵ՛Ն ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՎՅՈՒԹԵԱՆ ՊԼԱՏՅՈՐՄԸ: Այն պատճոհ՝ որ Դաշնակցութիւնը յեղափոխական խիզախութեամբ փորձեց իրականացնել նախորդ իշխանութեան ներքին որոգայթները ամէն օր դիմագրաւելով: Դաշնակցութիւնը չունէր պերճանքը խորհրդարանական մեծամասնութեան: Եւ ան չընապատուած էր մարդոցմով, որոնք իր գաղափարական գործնկերները չէին: Այնուամենայնիւ Դաշնակցութիւնը յաջողեցաւ պարտադրել իր պատճոհմը օրուան նախագահին եւ ստիպել, որ ան հրապարակաւ ինքզինք դնէ համակարգային արմատական փոփոխութիւններ իրականացնելու պարտաւորութեան տակ եւ նոյն քաղաքականութիւնը պարտադրել օրուան վարչապետին: Այսօր գիտենք, թէ ինչպիսի՛ մեքենայութիւններու դիմելով նախորդ իշխանութիւնը յաջողեցաւ տապալել Դաշնակցութեան գործը: Եւ յստակ է, որ Դաշնակցութեան գրաւը սխալ դուրս եկաւ յատկապէս տնտեսական յարաբերութիւններու յեղաշրջման ճակատին վրայ: Թէեւ ան կրցաւ այնուամենայնիւ կարելի դարձնել նոր սահմանադրութեան հռչակումը եւ թուրքիոյ հետ տեղքայլի մէջ գտնուող Արձանագրութիւններու չեղարկումը: Ցատակ է, որ այս բոլորը խորքային քննութեան կարիքը ունին եւ Դաշնակցութիւնը գործ ունի ընելիք թէ՛ իր ներքին ճակատի խնդիրները բերեղացնելու, իր վիճակացոյցը վերանայման ենթարկելու եւ թէ իր վաղուան գործին ռազմավարական առաջադրանքները ճշդելու մարգերուն մէջ:

Ես կասկած չունիմ, որ Դաշնակցութիւնը պիտի ընէ այդ բոլորը: Բայց անկախ այդ բոլորէն, մեր առջեւ կայ պետութեան գործին մեծ հրամայականը: Վաղուան վարչապետը իր ունեցած բացարձակ մեծամասնութեան որոգայթները ճիշդ գնահատելով եւ մանաւանդ գիտակցելով, որ ինք զրկուած է խորհրդարանական իրական ընդդիմութեան մը բարիքէն՝ այժմ պարտաւորութեան տակն է (առաջին անգամ ըլլալով եւ վերջա-

պէս) յեղափոխութի՛ւն իրականացնելու: Այն իսկ յեղափոխութի՛ւնը՝ որ ինք քանիցս իրագործուած յայտարարեց իր կուսակցութեան բեմերէն առանց իսկապէս յստակացնելու, թէ ինչի՛ մէջ կը կայանար ան: Եկած է ժամանակը ճշգրտօրէն բացայայտելու, թէ ի՛նչ բան պիտի իրագործէ այս յեղափոխութիւնը մեր ժողովուրդին համար:

Արդ, կու գանք ըսելու, որ վաղուան վարչապետին իրական ընդդիմութիւնը այժմ կը գտնուի Ազգային ժողովէն դուրս եւ ան մարմնաւորուած պիտի ըլլայ Դաշնակցութեան պլատֆորմի նորմերով: Այդ նորմերը նոյնինքն մեր ժողովուրդի ազատագրման բանալիներն են: Ազատագրել ՀՀ տնտեսութիւնը մենաշնորհային համակարգի ցեցերէն եւ բանալ շնչերակները տնտեսութեան դէպի իրական եւ որակաւոր աճ: Լուծել երկրի գիւղատնտեսութեան, կենսոլորտի, առողջապահութեան, կրթութեան եւ մշակոյթի կնճռոտ հարցերը ազգակեղբոն լուծումներով: Եւ վերջապէս, Արցախեան հիմնահարցին վերաբերմամբ հետապնդել ազգային տոկուն քաղաքականութիւն՝ մերժելով նահանջական դիւանդակցութեան բոլոր քաջբռնութենքը: Եւ այն չափով, որ յաջորդ կառավարութեան ծրագիրը անկեղծօրէն կ'իրացնէ այս նորմերը, այսինքն՝ Դաշնակցութեա՛ն պատճոհմի նորմերը, վարչապետը հնարաւոր կը դարձնէ ազգային համաձայնութեան եզրեր ստեղծել ի մի բերելով երկրի քաղաքական դաշտի բոլոր իրական ուժերը եւ կը յաջողի չըջանցել խորհրդարանական ներկայ մեծամասնութենէն բխող ճակատագրական բարդութիւնները:

Ի վերջոյ իր առջեւ ծառացող առաջնահերթ մարտահրաւէրը ազգային ընդհանուր համաձայնութեան հրամայականն է խորհրդարանական ներկայ մեծամասնութեամբ հանդերձ: Պէտք է միշտ յիշել, որ այս խորհրդարանը ընտրուեցաւ ամբողջ երկրի քուէարկողներու ընդհանուր թիւին մէկ թոյլ տոկոսով միայն: Ամբողջ ժողովուրդի անունով խօսող շարժումը հիմա պատեհութիւն ունի իր ժողովրդականութեան իսկական սահմաններուն գիտակցելու: Նոյն դասը պիտի առնեն նաեւ ընտրապայքարին մաս կազմած բոլոր քաղաքական ուժերը (ներառեալ՝ Դաշնակցութիւնը, որ քուէներու մեծ թիւ մը կորսնցուց): Առակս ի՞նչ ցուցանէ: Իմ կարծիքով, առակս ցուցանէ միայն մէկ բան: Մեր ժողովուրդին հսկայ զանգուածը դեռ համբերութեամբ կը սպասէ մեզի: Կը սպասէ, որ իր ճակատագրի ղեկը ստանձնած կամ անոր յաւակնող բոլոր քաղաքական ուժերը դառնան դէպի իր կարիքները, դէպի իր ցաւե՛րը եւ դառնան «լիաժամ» (full time!) եւ իրական լուծումներով ամոքեն իր վէրքերը, տէր կանգնին իր ապագայ սերունդներուն եւ ընեն այնպէս, որ ինք կարողանայ վերջապէս ապրիլ իր հողին վրայ արժանապատիւ կեանքով: Եւ հոս բոլորս միատեղ մեր հաւաքական պարտքը հատուցելու խնդիր ունինք հանդէպ մեր ժողովուրդին:

Ի սրտէ յաջողութիւն կը մաղթեմ նորընտիր Ազգային ժողովին եւ վաղուան կառավարութեան:

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ
Դեկտեմբեր 11, 2018
Ուաշինկթըն

**Տնոփաւոր Նոր Տարի
եւ Սուրբ Ծնունդ**

ԱՄԱՆՈՐ – ՆՈՐ ՏԱՐԻ
Երկուշաբթի, 31 Դեկտեմբեր 2018
Ժամերգութիւն կէս գիշերին, ժամը 12:00-ին

Երեքշաբթի, 1 Յունուար 2019
Հաղորդութիւն. կէսօրէ առաջ ժամը 10:00-ին

ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ԾՆԴԵԱՆ-ԽԹՈՒՄ
Շաբաթ՝ 5 Յունուար 2019
Ժամերգութիւն եւ ընթերցումներ. կ. ե. ժամը 5:00-ին
Ապա՝ Ս. եւ Անմահ Պատարագ որուն պիտի յաջորդէ
Ս. Ծննդեան Աւետիսի շրջագայութիւնը.

Ս. ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
Կիրակի՝ 6 Յունուար 2019, Bon Pasteur եկեղեցի
Ս. եւ Անմահ Պատարագ եւ Ջրօրինէք. կ. ա. ժամը 12:00-ին
Կը պատարագէ եւ քարոզէ եկեղեցւոյս Հոգեւոր Հովիւ
Հոգջ. Տ. Վարդան Վրդ. Թաշճեան

ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ
Երկուշաբթի՝ 7 Յունուար 2019
Ս. եւ Անմահ Պատարագ. կ. ա. ժամը 12:00-ին

Ջրօրինէքի առիթով կնքահայրութեան
փափաք ունեցողներէն կը խնդրուի հեռաձայնել
դիւանատուն 450-688-6795

**Այցելեցեք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝
www.sourphagop.org**

«Ծիշոդ է որ քիչ ենք թիւով, որպէս գաղութ, սակայն կամքը կայ, ուժը կայ եւ մեզ համախմբող սէրը կայ»

Հարցազրոյց Հոգեշնորհ Հայր Գարեգին Ծիւրտըմեանի հետ

Հոգեշնորհ Հայր Գարեգին Ծիւրտըմեան ծնած է Հալէպ, յաճախած է Հալէպի Հայ Կաթողիկէ Զուարթնոց վարժարանը: Ապա աւարտել է Կոնստանդնուպոլիսի Կաթողիկոսութեան դպրեմանը, 2012-ին, կոնսակրօն քահանայ ձեռնադրուած է, որմէ ետք դպրեմանին մէջ պաշտօնավարած է որպէս հսկիչ, ապա որպէս փոխ տեսուչ, միաժամանակ դասաւանդելով եկեղեցական երաժշտութիւն: Խմբավարած է դպրեմանի «Արմաշ» արական երգչախումբը եւ կաթողիկոսարանի երկսեռ «Շնորհալի» երգչախումբը: Վանգուվըր ժամանած է 13 Օգոստոս 2017-ին, ուր մինչեւ օրս կը ծառայէ որպէս տեղւոյն Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ:

Հ.- Հա՛յր Գարեգին, արդէն մէկ տարի է Վեր կը ծառայէ՞ք Վանգուվըրի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ, որպէս հոգեւոր հովիւ: Այս մէկ տարուան ընթացքին նկատուելի փոփոխութիւններ տեղի ունեցա՞ն համայնքի կեանքին ներս, յատկապէս սուրբահայ ներգաղթողներու հոսով: Ի՞նչ ծրագիրներ մշակուեցան բարեփոխելու համայնքի իրավիճակը:

Դ.- Բնականաբար զբաղւած փոփոխութիւնները խիստ քաջալերելի են: Մարդ արարածը միշտ փոփոխութիւններ կ'որոնէ իր կեանքին մէջ, որոնք կ'ազդեն մարդու թէ՛ մտքին, թէ՛ հոգիին եւ թէ՛ ամբողջ էութեան: Համայնքի կեանքէն ներս եւս փոփոխութիւնները կրնան զբաղւած զոգեցողութիւն ունենալ: Վանգուվըր հասած սուրբահայ գաղթականները, զորս այլեւս գաղթական չեն ուզեր կոչել, իրենց զբաղւածները ունենցան համայնքի կեանքէն ներս: Անոնք Վանգուվըրի համայնքի զաւակներուն հետ, որոնք շատոնց հոս հաստատուած են կամ նոյնիսկ հոս ծնած-մեծցած, ձեռք-ձեռքի տալով աշխուժութիւն, նոր ոգի, նոր գոյն եւ նոր զարկ տուին գաղութին. օրինակի համար վերջերս կազմուեցաւ Համազգայինի «Վարդ» մասնաճիւղը նաեւ գաղութի ընտանիքներուն ջանքերով եւ սուրբահայ ընտանիքներուն օժանդակութեամբ ՀՄԸՄ-ի մասնաճիւղ հիմնուեցաւ գաղութի մէջ: Բնականաբար եկեղեցական կեանքը անմասն չմնաց այս ներդրումէն: Եկեղեցւոյ խորանն ու վերնատունը օժտուեցան նոր սարկաւազներով, Դպրաց դասի նոր անդամներով եւ մանաւանդ Տիկնանց միութիւնը համալրուեցաւ նոր անդամուհիներով, որոնք նուիրաբար կը գործեն՝ հոգալու եկեղեցւոյ կարիքները, նոյնիսկ ապագայի ծրագիրներ կը մշակեն:

Հ.- Ի՞նչ է ձեր տեսլականը համայնքի ապագային առնչութեամբ: Ինչպիսի՞ ծրագիրներ կարելի է մշակել առաւել եւս զարկ տալու քրիստոնէական, հայեցի դաստիարակութեան եւ համայնքի կազմակերպման:

Դ.- Նախքան ծրագիրներ մշակելը հարկ է միշտ զբաղւած մօտեցում ունենալ, որովհետեւ ամէն տեղ զփուլարութիւններ եւ խոչընդոտներ առկայ են, սակայն զբաղւած մօտեցումը յոյս կը ներշնչէ մեզի՝ շարունակելու մեր աշխատանքները: Յուսահատիլ արտօնուած չէ քրիստոնեային եւ Յոյսը Յիսուսի տրուած անուններէն մէկն է Աւետարանին մէջ: Երբ յուսահատինք, կը նշանակէ մենք Քրիստոսը չունինք մեր սրտերուն մէջ: Ահա ա՛յս մօտեցումով կը ներշնչուիմ ես մեր գաղութի կեանքին նկատմամբ:

Նկատառելի է, որ մեր գաղութը օրէ օր կ'աճի, կը բարգաւաճի, կը զարգանայ, կը գործակցի եւ մեծ ընտանիքի մը կը վերածուի: Մենք կը փորձենք ջամբել մեր գաղութի զաւակներուն այն համոզումը, թէ մեր կեղբոնք, ուր բոլորս կը հաւաքուինք, մեր տունն է. մեր եկեղեցին, ուր բոլորս միաբերան աղօթք կը բարձրացնենք առ Աստուած, մեր երկ-



րորդ տունն է եւ այդ համոզումով, առաջին անգամ ըլլալով, հաւաքական տնօրէնէք մը ըրինք կեղբոնին մէջ, որպէսզի մեր գաղութի զաւակները զգան, թէ հոն կը հաւաքուինք որպէս մէկ մեծ ընտանիքի զաւակներ, իրարմով ոգեշնչուող, իրարմով զօրացող ու ներշնչուող անդամներ:

Ապագայի մեր ծրագիրներուն առնչութեամբ յայտնեմ, որ գործակցութեամբ Համազգայինի հետ կազմած ենք «Արցախ» երգչախումբը եւ յառաջիկայ ամիսներուն հրաւէր ստացած ենք՝ մասնակցելու օտար եկեղեցիներու հետ Ծննդեան նուիրուած համերգի մը, անշուշտ անկէ ետք նկատի ունինք աւելի մեծ համերգ մը ունենալ՝ գաղութային ձեռնարկներու ծիրէն ներս:

Ծրագիրներ կան, որոնք տակաւին կը սերտուին, ինչպէս օրինակ՝ կը մտածուի Կիրակնօրեայ դպրոցի ստեղծման մասին, զոր գաղութը բնաւ չէ ունեցած, բայց անհրաժեշտութիւն կը նկատենք՝ քրիստոնէական եւ հայեցի դաստիարակութիւն, կրօնական, աստուածաշնչական եւ եկեղեցական գիտելիքներ ջամբելու մեր երիտասարդներուն:

Ունինք նաեւ «Սասուն» ամառնային ճամբարը, որուն կը մասնակցին մեծ թիւով փոքրիկներ եւ պատանիներ: Երեք շաբաթ տեւողութեամբ այս ճամբարին անոնք կը սորվին հայերէն երգեր, պարեր եւ խոսացուած դասեր՝ հայերէնի ու հայոց պատմութեան շուրջ, որպէսզի աւարտին հանդէս դան իրենց ծնողներուն եւ հանդիսատեսներուն առջեւ: Այս տարի ունէինք շուրջ 60 աշակերտ, որոնք երեք շաբթուան աւարտին, իրենց ուսուցիչներուն օժանդակութեամբ ելոյթ մը պատրաստեցին՝ նուիրուած Հայաստանի անկախութեան 100-ամեակին: Ինծի համար թէեւ յոգնեցուցիչ էին այս ճամբարին աշխատանքները, սակայն չափազանց տպաւորիչ էր մեր ապագայ սերունդին հետ աշխատիլը, անոնց հաւրադատութիւնը, անմեղունակութիւնն ու խանդավառութիւնը ապրիլը: Կրնամ ըսել, որ անհամբեր կը սպասեմ յառաջիկայ տարուան ճամբարը:

ԾիժԴ... Ծար. էջ 14

Հարցազրոյցը վարեց՝
Սոնա Թիթիզեան Կէտիկեան



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ՇՆՈՐՀԱՌՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
2019

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ Ո Յ Ց

Ա Մ Ա Ն Ո Ր

Երեքշաբթի, 1 Յունուար 2019
ՄԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ՝
Առաւօտեան ժամը 10.30
ՄԿԻԶԲ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ՝
Ժամը 11:00

Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Ց

Շաբաթ, 5 Յունուար 2019
ՄԿԻԶԲ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐՈՒ՝
Երեկոյեան ժամը 5:00
ապա
Ժամը 6:00-ին՝
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Տօն Ծննդեան
Յիսուս Քրիստոսի
Կիրակի, 6 Յունուար 2019

ՄԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ՝
Առաւօտեան ժամը 9:30

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
Առաւօտեան ժամը 11:00

ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ

Երկուշաբթի, 7 Յունուար 2019
Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 10:30
Սկիզբ Հոգեհանգիստի՝ ժամը 11:00

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրինէք փափաքող ընտանիքները
թող բարեհաճին դիմել Հովիին
Տ. Գառնիկ Ա. Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 909 5203 թիւին:

Սիրելի հայրողի,
Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ
Աստուածայայտնութեան տօնին առիթով,
նուիրատուութեամբդ (Իւղագին) մասնակցէ
եկեղեցւոյ առաքելութեան:

Կանխայայտ Շնորհակալութեամբ՝
ՀՈՎԻԻ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ:
ԶԵԶԻ ՄԵԶԻ ՄԵԾ ԱԻԵՏԻՍ:

SPECIAL OFFER!

CLASSIFIED SECTION

DON'T MISS THIS OPPORTUNITY TO ADVERTISE!

NEW AT HORIZON WEEKLY!
A CLASSIFIED ADS SECTION

SPECIAL RATES! / A DISCOUNT OF 60%

Please call (514) 332-3757 to reserve your space now!

RITA BAGHDASSARIAN

Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE •
REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉ •
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

VIZUALIS

optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview - Fairview Mall
Pointe Claire
514 695 2555 - VIZUALIS.CA



Danièle Papazian, MSc.

Courtier immobilier

C 514.234.6799

dpapazian@remax-quebec.com

www.remaxducartier.com



1290, rue Bernard Ouest, bureau 100
Outremont Qc H2V 1V9
T 514.271.2131



Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենյակ

KRIKOR ABRKIAN VAHAN MATOSSIAN

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7
T: 514.903.3999



BOURQUE KABABEDIAN NOTAIRES

NOTAIRES ET CONSEILLERS JURIDIQUES

Un rendez-vous avec le savoir-faire

GEORGE KABABEDIAN, LL.B., J.D., D.D.N.
NOTAIRE ET CONSEILLER JURIDIQUE

465, RUE SAINT-JEAN
BUREAU 801
MONTREAL, QUEBEC H2Y 2R6

TÉLÉPHONE : 514 842-4181, POSTE 248
FAX : 514 842-6808



Taxi Mirabel Հայկական հաստատությունը կարիքը ունի
20 հա թաքսի վարորդի Միքայել շրջանին մեջ:
Հաճեցեք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիվին:

Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number,
besoin de chauffeur de taxi. Call/Appelez: (514) 979 1317



RE/MAX 3000 inc.
Agence immobilière

Elie Berberian
Courtier immobilier / Real Estate Broker

C 514.519.3543
B 514.333.3000



KORONA

JOAILLIERS • 1964 • JEWELLERS

Daniel Torosian

3933 St Martin O. Coin Curé-Labelle Laval, Qc.
514-274-5555 | 450-688-5515 | korona.ca

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6

Res: (514) 332-7021

Fax: (514) 332-7376

Cell: (514) 927-2666

krikormar@gmail.com

FIVE STAR
ELECTRIQUE
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM



SOSIE DERNERSEIAN
MORTGAGE AGENT
LICENCE #M12001830
716 Gordon Baker Road,
Unit 204A, Toronto
Ontario M2H 3B4



CENTUM™
Metrowest Wealth Solutions Inc.
License # 12147

Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Լոտար եւ Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան

Chadir
Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

RE/MAX West Realty Inc., Brokerage
Independently Owned and Operated

Anto
Keledjian

Sales Representative
Residential & Commercial

Dir: (416) 930-2686

Bus: (416) 588-6777

570 Bloor St. W., Toronto, ON M6G 1K1

ANTOK13@GMAIL.COM • WWW.TORONTOSOLD.CA

SUQ

2 Champagne Drive # B9
Toronto, ON M3J 2C5
Tel: (416) 661 8998

www.suqkitchen.ca

ANI
Restorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5



Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian

Sales Representative

Direct: (416) 918-3615

Office: (416) 739-7200

Fax: (416) 739-9367

annievarbed@hotmial.com

www.suttongroupadmiral.com

Each Office is Independently owned and Operated



hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S

andre@HearingAidSource.ca

416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9



Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON. M1R 2Z5

Tel 647.351.2015

www.crownpastriesbaklava.com



Part of the (Royal) family of pharmacies.

Pharmacists

Sarkis Balian

Vartan Balian

Maral Abdalian Balian

Cassandra
Pharmacy Inc.

2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel.: 416.449.2040

Fax: 416.449.2048

ANI BAKERY

ԱՆԻ ՓՈԱԴԱՆ

Middle Eastern Pizza
Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8

Tel: 416.285.7164

Կիլիկիոյ... Ակիգըը էջ 9

ամէնը — ինչպէս չալ մը, ծածկոց մը եւ թերեւս ուտեստեղէնի քիչ մը փշուրներ — ինչ որ կրնային վերցնել իրենց տնական գոյքերէն (...) Կարգ մը պարագաներու մէջ, տարագիրներուն կը տրուէին քանի մը ժամեր, բացառիկ պարագաներու՝ քանի մը օրեր, կարգադրութիւններ ընելու համար իրենց ստացուածքներուն եւ տնական գոյքերուն մասին: Բայց այս ձեւը անշուշտ կը յանգէր պարզապէս աւագակութեան: Հայերը՝ միայն թուրքերու դոյք ծախել արտօնուած էին. եւ որովհետեւ թէ՛ ծախողները եւ թէ՛ գնողները գիտէին, թէ մէկ կամ երկու օր միայն կար ծախելու համար ամբողջ կեանքի ընթացքին զիգուած ինչքերը, ձեռք բերուած գիները ծախուածներուն արժէքին պզտիկ մէկ կոտորակը միայն կը ներկայացնէին (...) Կառավարական պաշտօնեաներ հայերուն կը ծանուցանէին նաեւ, թէ որովհետեւ իրենց տարագրութիւնը ժամանակաւոր էր, եւ ծրագրուած էր, որ պատերազմը լմննալէ ետքը ետ պիտի բերուէին, այդ պատճառով արտօնուած չէին իրենց տունները ծախելու: Բայց հագիւ թէ այդ սեփականատէրերը գիւղէն կը հեռանային, եւ ահա, մահմետական մուհաճիրները — թուրքիայի ուրիշ մասերէն գաղթողներ(939) — կը փոխադրուէին հայկական թաղերը: Նոյնպէս հայերուն բոլոր արժեղէնները — դրամ, մատանիներ, ժամացոյցներ եւ գոհարեղէններ — կը տարուէին պահականոցները՝ «ապահով պահուելու համար», մինչեւ իրենց վերադարձը. բայց թուրքերը զանոնք իրենց միջեւ կը բաժնէին (...) 1915 Ապրիլէն մինչեւ Հոկտեմբեր, Փոքր Ասիայի գրեթէ բոլոր պողոտաները լեցուած էին աքսորականներու այս արտամարդկային խումբերով: Կը տեսնուէր անոնց պտուտքիւր իւրաքանչիւր հովիտէ դարվար ու դարվեր, եւ մագլցիւր գրեթէ իւրաքանչիւր լեւրան կողն ի վեր, քալելով եւ շարունակ քալելով, չգիտնալով երբեք, թէ դէպի ո՛ւր, բայց եթէ ամէն ճամբայ՝ որ մահուան կը տանի: Գիւղ գիւղի ետեւէ եւ քաղաք քաղաքի ետեւէ պարպուեցաւ իր հայ ընակչութեանէն (...) Ստուգուածին համաձայն, այս վեց ամսուան միջոցին, 1, 200, 000 ժողովուրդ դէպի սուրիական անապատը այս ուղեգնացութեան համար ճամբայ ելաւ (...) Հագիւ թէ հայերը բաժնուած կ'ըլլային իրենց ծննդավայր գիւղերէն, երբ հաւածանքները կը սկսէին: Այն ճամբաները, ուրկէ կ'անցնէին, հագիւ թէ ջորիներու արահետներ էին. եւ անոնք որ քանի մը ժամ առաջ մեկնած էին իբր կանոնաւոր թափօր, շուտով կը դառնային այլակերպուած տքնաջան խուժան մը: Կիները կը բաժնուէին իրենց զաւակներէն եւ ամուսինները իրենց կիներէն: Ծերունիները շուտով յարաբերութենէ կը զրկուէին իրենց ընտանիքներուն հետ, խոնջաբեկ ու ոտքերնին ցլաւած: Թուրք սալլապանները, իրենց վարձուորներուն վերջին դրամը կորզելէ ետքը, յանկարծ զանոնք եւ անոնց գոյքերը ճամբուն վրայ կը թափէին, ճամբէն կը շեղէին եւ գիւղ կը վերադառնային ուրիշ գոհեր գտնելու: Այսպէս, կարճ ժամանակէ մը ետքը, գրեթէ ամէն մարդ, երիտասարդ թէ ծեր, դատապարտուած էր ոտքով ճամբորդելու: Այն ոստիկան– գինուորները՝ զորս կառավարութիւնը կը զրկէր իբր թէ աքսորականները պաշտպանելու համար, հագիւ քանի մը ժամէն անոնց հարստահարիչները կը դառնային (...: Անոնց) ջոկատները առաջ կ'անցնէին՝ ծանուցանելու քրեւտ ցեղերու, թէ իրենց գոհերը կը մօտենային. նաեւ թուրք գիւղացիներուն տեղեկութիւն կը տրուէր, որ իրենց երկար ատենէ ի վեր սպասած առիթը հասած էր: Կառավարութիւնը նոյնիսկ բանտերը բացաւ եւ ազատ արձակեց դատապարտեալները, այն հասկացողութիւնով՝ որ անոնք իբր «բարի իսլամներ» պիտի վարուէին մօտեցող հայերուն հետ: Այսպէս, իւրաքանչիւր կարաւան գոյութեան մշտական պայքար մը ունէր զանազան դասակարգի թշնամիներու դէմ — իրենց ընկերացող ոստիկան–գինուորները, թուրք շինականները եւ գիւղացիները, քրեւտ ցեղերը եւ չէթէներու կամ աւաղակներու հրոսախումբերը»:

ԱՂԲԻԻՐՆԵՐ Եւ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

938.– ՄՅ, էջ 268–269, 270, 272, 273, 274:

939.– Օսմանեան կայսրութեան նահանջներուն հետ՝ իսլամ գաղթականներ խուժած էին դէպի անոր այն տարածքները, ուր անոր իշխանութիւնը հակառակ հիւանդութեան՝ դեռ այնքան չէր տկարացած: Այդ տարածքներուն մէջն էին հայերը,

իրենց պապենական հողերու մեծ մասէն մինչեւ Կիլիկիա, եւ հիւսիսային Սուրիա: 1912–1913–ի Պալքանեան պատերազմները դարձած էին իսլամ գաղթականներու խուժման գագաթնակէտը: Ըստ Թանէր Աքչամի, սկզբնապէս, կամ նախքան Համաշխարհային Առաջին Պատերազմը, իսլամ գաղթականներուն վերաբերեալ իթթիհատական ծրագիրը ի գործ դրուած էր Եգէականի մէջ, չըջանը ազատելու համար «ոչ–թուրք տարրեր»էն: Եւ երբ աշխարհաստան պատերազմը սկսած էր, ու Կովկասէն եւս իսլամներ խուժած էին Օսմանեան սահմաններէն ներս, ծրագիրը կիրարկուած էր նաեւ Անատոլիայի վրայ: Այս քաղաքականութեան երկու առաջնահերթութիւնները. նախ՝ չըջանին գտումը ոչ–իսլամ տարրէն, որ համարուած էր մահացու սպառնալիք մը պետութեան, եւ «խլիւղ» պիտակուած. եւ երկրորդ՝ թրքացումը: Արդ, ըստ այս քաղաքականութեան, քրիստոնեայ համայնքներ, այսինքն՝ հայերը, յոյները եւ ասորիները պէտք է բռնի տեղափոխուէին կամ վտարուէին Անատոլիայէն, եւ իսլամներ բերուէին–լեցուէին անոնց տեղերը: Մինչ Եգէականի գտումին ատեն գործադրուածը սպառնալիքներ, ահագուումներ, թալանումներ եւ սահմանափակ սպանութիւններ էին, Անատոլիայի պարագային, մանաւանդ հայերուն եւ ասորիներուն հետ կատարուածը՝ կա՛մ տեղահանութեան ճամբուն վրայ զանգուածային սպանութիւններու շարք մըն էր, եւ կամ՝ անոնց լքումը անապատներու մէջ մահուան: Տե՛ս Թանէր Աքչամի «The Young Turks’ Crime Against Humanity», New Jersey, 2012, էջ 29, 55:

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններուն եւ ժամերուն՝

Videotron: HD838 կամ SD238	Երեքշաբթի - երեկոյեան ժամը 9:00-ին (առաջին անգամ) Չորեքշաբթի - կէսօրէ ետք ժամը 2:00-ին Չինգշաբթի- երեկոյեան ժամը 6:00-ին
Bell Fibe: HD1216 կամ SD216	Շաբաթ - առաւօտեան ժամը 7:00-ին, եւ երեկոյեան ժամը 11:00-ին Կիրակի - առաւօտեան ժամը 6:00-ին, եւ կէ. ժամը 4:00-ին Երկուշաբթի - առաւօտեան ժամը 6:00-ին, եւ կէ. ժամը 5:00-ին

Ուղիղ արձակում՝ www.icitelevision.ca
Նախատեսուած է կարելի է քնել՝ www.youcaring.com/hayhorizon

Voyages
HAIIG
Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼՍԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻԷՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՍԱՆԱՅԻՆ» ՄԱՍՆԱԾԻՐԻ «ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆ

Այս տօնական օրերու նախօրեակին գրադարանի անձնակազմը կը շնորհաւորէ իր անդամ-անդամուհիներուն, նուիրատուներուն, ինչպէս նաեւ բարեկամներուն Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը:

Այս առթիւ կ'ուզենք յիշեցնել, թէ Համագգայինի գրադարանը կը շարունակէ ընդունիլ հայերէն կամ օտար լեզուով հայկական նիւթեր բովանդակող գրքեր:

[AB]

ALINE BEKEREJIAN

NOTAIRE • NOTARY

ՆՈՏԱՐ Ալին Պէքըրէճեան

Achat	Առեւտուր	Purchase
Hypothèque	Անշարժ Կայրածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսաւորում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կայրածք	Estate
Marriage	Ամուսնութիւն	Marriage
Procuration	Փոխանորդագիր	Power of Attorney

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
Services offered in Arabic, Armenian, French and English.

Ծառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

horiZon

H O R I Z O N
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes (1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription Canada
2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylvia Ehramdjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylvia@horizonweekly.ca
Courrier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Գրիգոր Հոթոյեան, (416) 494-1921
Ժազ Վարպետեան, (416) 722-9225

Թորոնթոյի Ներկայացուցիչներ՝

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիւմճեան

Financé par le gouvernement du Canada

Funded by the Government of Canada

Canada

ԱՄՏՂԱԳՈՒՇԱԿ



ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ).- Ճամբորդութեան ծրագիր մը պիտի յստականայ. Պատրաստ եղէք կատարելու պէտք եղած դասաւորումները։ Ոչինչ անտեսեցէք։ Դիւրին եւ հեզասահ պիտի ընթանայ ամէն ինչ, կարելի եղած չափով վայելեցէք այս ճամբորդութիւնը։

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս).- Երագային տրամադրութիւն մը ձեզ փոխադրած է անցեալի օրերուն։ Գործնական հարցերու մասին մտածեցէք՝ շօշափելի արդիւնք ունենալու համար։ Ժամանակն է կեդրոնաւալու եւ լրջօրէն հետապնդելու ձեր գործերը։

ԵՐԿՈՒՌՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս).- Եթէ մուրհակի վճարումներ ունիք, կատարեցէք ձեր պարտականութիւնը։ Մնացեալը կը կարգադրուի, անպայման դուռ մը կը բացուի։ Դուք շարունակեցէք ձեր տրամադրութիւնը բարձր պահել եւ ամէն ինչ շուտով պիտի դասաւորուի։

ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս).- Բարեկամական հրաւեր մը ուղղուած է ձեզի, ընդառաջեցէք։ Յոն պիտի հանդիպիք նոր դէմքերու, որոնց հետ բարեկամութիւն պիտի հաստատէք։ Գոհ պիտի մնաք։ Պէտք է քիչ մը դուրս գալ գործի եւ աշխատանքի միջավայրէն։



ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս).- Շատախօս անձի մը պիտի հանդիպիք։ Ան պիտի շահագործէ ձե՛զ՝ պատճառ դառնալով աշխատանքի ժամերու կորուստին։ Յեռու մնացէք այսպիսի անձերէ։ Մարդիկ երբեմն դիտմամբ կ'ուզեն վատնել ձեր ժամանակը։

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր).- Եթէ կենդանական աշխարհը կը հետաքրքրէ ձեզ, պատրաստ եղէք ստանձնելու նիւթական պարտաւորութիւն եւ ժամանակ տրամադրելու անձանծրոյթ հետաքրքրութիւններու եւ զբաղումներու։ Լաւ ժամանակ անցուցէք։

ԿՇԻՈՔ (24 Սեպտեմբերէն 23 Յոկտեմբեր).- Անցեալի լաւ օրերը յիշելով՝ պիտի փափաքիք նման վիճակ մը ստեղծել, լաւատեսութեան կնիքով։ Երէկը լաւ նկատելով այսօրուան համար մի' տրտնջաք։ Ապագան կրնայ ա'լ աւելի լաւ ըլլալ եւ անսպասելի նորութիւններ բերել։


ԿԱՐԻԾ (24 Յոկտեմբերէն 23 Նոյեմբեր).- Յեռաւոր տեղէ մը նոր լուրեր պիտի ստանա՞ք հեռաձայնով կամ համացանցով։ Շուտով պատասխանեցէք, փոխադարձաբար ձեր լուրերը փոխանցելով։ Յարազատներու միջեւ երկարատեւ լուրթիւնը կասկած կ'արթնցնէ։

ԱՂԵՂԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր).- Չարիքի դէմ չարիք ընելը կրկնակի չարիք է։ Ներողամիտ եղէք ձեզի դէմ եղած չարամիտ կեցուածքին նկատմամբ։ Օր մը կը գոջան եւ եղածին համար ներողութիւն կը խնդրեն։ Դուք մնացէք ձեր համոզումներուն կողմնակից։

ԱՅԾԵՂԶԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունւար).- Մի' սպասէք, որ ձեր աշխատանքը հրապարակաւ յայտարարուի։ Կարելորը ձեր իրագործումէն ձեր գոհ մնալն է։ Օրը իրեն հետ բարիք պիտի բերէ։ Ուրախ եղէք ձեր իրագործումներով եւ զգուշացէք յուսահատութենէ։

ԾՈՎԱՆՈՅԾ (21 Յունուարէն 19 Փետրուար).- Նոր ծրագրի մը վրայ հակած էք, կ'ուզէք աւարտել շուտով։ Եթէ օգնութեան կարիք ունիք, դիմեցէք փորձառու անձի մը բացատրութեան եւ օժանդակութեան։ Ամէն բան լաւ պիտի ընթանայ, մի' մտահոգուիք։

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ).- Գարնաւային այս հանգրուանին կրնաք մանուկները պտոյտի տանիլ այս շաբաթավերջին։ Դուք եւս պիտի ուրախանա՞ք յիշելով ձեր մանկութիւնը։ Մանուկներուն հետ ժամանակ անցընելը լաւ տրամադրութիւն կը ստեղծէ։



ՃՈՎԱՆՈՅԾ (21 Յունուարէն 19 Փետրուար).- Նոր ծրագրի մը վրայ հակած էք, կ'ուզէք աւարտել շուտով։ Եթէ օգնութեան կարիք ունիք, դիմեցէք փորձառու անձի մը բացատրութեան եւ օժանդակութեան։ Ամէն բան լաւ պիտի ընթանայ, մի' մտահոգուիք։

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ).- Գարնաւային այս հանգրուանին կրնաք մանուկները պտոյտի տանիլ այս շաբաթավերջին։ Դուք եւս պիտի ուրախանա՞ք յիշելով ձեր մանկութիւնը։ Մանուկներուն հետ ժամանակ անցընելը լաւ տրամադրութիւն կը ստեղծէ։

Ընդդիմութեան... Սկիզբը էջ 8

«սոցիալ լիպերալիզմ»ին հետ։ Արդիւնքով՝ դրամազլուխի խիստ կուտակման հետեւանքով աղքատացած եւ իրենց կենսամակարդակի բարելաւման ամէն յոյս կորսնցուցած աշխատաւորական միջին դասակարգի խաւերը սկսան զօրակցիլ ծայրայեղ աջին եւ ֆաշակաֆուիթեան։ Այսինքն՝ չժխտելով հանդերձ որ աշխարհական (լայիք) հասարակարգի յառաջդիմութեան սատարող բոլոր այս խնդիրները նաեւ Ձախի օրակարգին պէտք է ըլլան, կարելի չէ անոնց տալ առաջնահերթութիւն մը, որ գրեթէ մոռացութեան ենթարկէ Ձախի հիմնական պայքարը՝ սոցիալական արդարութիւն հիմնուած հարստութեան վերաբաշխումի եւ սոցիալական պաշտպանութեան հաստատութիւններու ստեղծման վրայ։ Հայկական իրականութեան մէջ գործող Ձախակողմեան ուժերուն համար ի մասնաւորի ազգային անվտանգութեան, ազգային հիմնախնդիրներու եւ, ընդհանրապէս, ազգային արժէքներու համադրումը սոցիալական արդարութեան մարքսեան հասկացողութեամբ հիմնականուոյցին վրայ ամենամեծ մարտահրաւէրն է, որովհետեւ առանց անոր ազգային միասնականութիւնը, հայրենադարձութիւնը եւ նոյնիսկ զարգացումը պարապ լողուեզ է։ Առանց սոցիալական արդարութեան արտագաղթը անխուսափելի է, իսկ արտագաղթը ազգային անվտանգութեան ամենամեծ սպառնալիքն է, ազգային գոյութիւնն իսկ խոցելի կը դարձնէ։

Հետեւաբար, Ազգային Ժողովի մէջ ընդգերմութեան բացակայութեան ամենատեսանելի եւ վտանգաւոր երեւոյթը՝ հարստութեան վերաբաշխումի դրօշակիր Ձախ այլընտրանքի մը չգոյութիւնն է։ Ի դէմս Բարգաւիաճի նախկին օլիկարգիան իր շարունակականութեան փաստը տուաւ։ «Թաւշեայ յեղափոխութեան» համար ժողովուրդի թշնամին իրաւամբ օլիկարգային մենաշնորհներն էին։ Յղացքը շատ հաւանաբար շարունակուի գործածուելի նոր մեծամասնութեան իշխանութեան արգելք հանդիսացող մեծ կապիտալի ամէն ներկայացուցիչի վրայ, մինչեւ որ անոնք վերածուին «սեփականատէք»ի եւ ստանան համակարգի նոր դեկավարութեան «օրհնութիւնը»... Այլապէս, ե՛ւ «Իմ քայլը», ե՛ւ «Լուսաւոր Հայաստան»ը տնտեսական լիպերալիզմի հաւատացողներն ու ջատագովներն են, որոնք հարկային քաղաքականութեան բարեփոխման թէ՛ սոցիալական ապահովութեան հաստատութիւններու ամբազրման ու ընդլայնման քիչ եւ ոչինչ տրամադիր են։

Ահա թէ ինչո՛ւ ընդգրիմադիր Ձախը եթէ այլընտրանք պիտի դառնայ, «Թաւշեայ յեղափոխութենէն» յետոյ համակարգային փոփոխութիւն առաջացնելու համար, կամ՝ յեղափոխութեան տալու համար ե՛ւ շարունակականութիւն, ե՛ւ նոր ուղղութածութիւն, նախ եւ առաջ պէտք է աշխատի ժողովրդային–հասարակական մակարդակով եւ հոն ստեղծէ անհրաժեշտ զօրակցութիւն

Ծիշո՛ւ... Սկիզբը էջ 11

Կան նաեւ այլ պատկերացումներ, որոնց մասին յետագային կ'անդրադառնամ, երբ յստակ ծրագիրներու վերածուին, երբ աւելի լաւ ծանօթանամ եւ ճանչնամ գաղութը, քաջատեղեակ ըլլամ գաղութին դիմադրաւած մարտահրաւէրներուն եւ դժուարութիւններուն։ Սակայն վստահեցնեմ, թէ՛ ճիշդ է որ քիչ եթ թիւով, որպէս գաղութ, սակայն կամքը կայ, ուժը կայ եւ մեզ համախմբող սէրը կայ։

Հ.– Ինչպէ՞ս կ'արժեւորե՛ք այսօր Վանգուլըրի հայ երիտասարդութեան իրավիճակը։

Պ.– Ուրախ եմ ըսելու, որ երիտասարդութեան մեծ տոկոսը հայախօս է, հակառակ որ ամէնօրեայ դպրոց չունինք, եւ մեր աշակերտները շաբաթօրեան աւարտելէ ետք հայկական դպրոց յաճախելու առիթը չունին։ Անով հանդերձ, մեր երիտասարդներուն մէջ վառ է հայկական ոգին, անոնք միշտ ներկայութիւն են մեր կեդրոնին մէջ, հետաքրքրուած են հայ մշակոյթով, եկեղեցիով եւ ակումբով եւ միշտ պատրաստ են՝ որեւէ աշխատանքի հրաւիրուելու պարագային։

Հ.– Դուք նաեւ կը դասաւանդե՛ք շաբաթօրեայ դպրոցին մէջ, ի՞նչ վիճակ կը պարզէ այսօր դպրոցին

եւ ընտրախաւ։ Արթուր Խաչատրեանի նկատողութիւնը՝ դժուար է Ձախ ըլլալ Աջ կառավարութեան մը մէջ, հարկ է ընդլայնել եւ վերասահմանել հետեւեալ բանաձեւումով. դժուար է Ձախ ըլլալ յետ–խորհրդային հասարակութեան մը մէջ, դժուար է յառաջդիմական ըլլալ պահպանողական հասարակութեան մը մէջ։ Այս հսկայ մարտահրաւէրին դէմ յանդիման Ձախի այլընտրանքի կազմաւորման արտա–խորհրդարանային քաղաքական գործը առաջ պէտք է տարուի պայքարի հետեւեալ ոլորտներուն մէջ։

Առաջին՝ շատ աւելի հնչեղօրէն բանաձեւել Ձախ–յառաջդիմական այլընտրանքի առաջնահերթութիւնները, հրապարակային բանավէճերու թէ՛ հանրային ելոյթներուն մէջ գաղափարախօսական ինքնութեան յղացքները գործածել բառացիօրէն առանց պատկերացումներու դիմելու։

Երկրորդ՝ հարստութեան վերաբաշխումի ու սոցիալական պաշտպանութեան աշխարհահայեացքը հաստատագրել քաղաքական լեզուաւստածողութեան մէջ։ Բաւարար չէ տնտեսական անհին վրայ կեդրոնանալ, անհրաժեշտ է ուշադրութեան կեդրոնի բերել աղքատութիւնն ու հարստութեան բաժանման անհաւասարութիւնը։

Երրորդ՝ կազմաւորել աշխատաւորական շահերու եւ իրաւունքներու գիտակցութիւն ժողովրդային զանգուածներուն մօտ։ Ազգը նախ եւ առաջ աշխատող քաղաքացին է, ոչ թէ շահագործող դրամատէրը։ Առանց դասակարգային տարբերութեան նուազումի ճիգին «ազգային համեալչութիւնը» հարստութեան անհաւասար բաժանումէն առաջացած մենաշնորհներու շարունակումը երաշխաւորող թմրադեղ է աշխատաւոր զանգուածին համար։

Չորրորդ՝ հասարակութեան մէջ առաջացնել սոցիալական պաշտպանութեան ցանցեր որպէս նէօլիպերալիզմի սպասելի նորագոյն գրոհներու դիմադրութեան դիրք եւ, միաժամանակ, մենաշնորհներու «ապամոնտաժացումը» թիրախաւորող շարժուն պայքարի միաւոր, այնպէս ինչպէս Կրամշեան սահմանումով բանաձեւուած են այս երկու յղացքները։

Հինգերորդ՝ իրարմէ անջատ, իրարու մրցակից արդէն սակաւաթիւ Ձախ քաղաքական ուժերու, հասարակական շարժումներու թէ՛ օրակարգային թեմաներ հետապնդող Ոչ Կառավարական կազմակերպութիւններու միջեւ երկխօսութեան միջոց ստեղծել ի խնդիր ընտրական լայն դաշինքի մը ձեւաւորման։ Կարմիր գիծերը պէտք է բացառեն հակաժողովրդավար, բռնարարքները չբացառող, ամբողջատիրական թէ՛ ապազգային/կողմնադիւստ նպատակներ հետապնդող ամէն կազմակերպութիւն, որոնք անյարիր են այլեւ վտանգաւոր՝ անկախ ազգային պետականութեան, ազգային զարգացման եւ ազգային հիմնախնդիրներուն լուծում բերելու Ձախ այլընտրանքի յանձնառութեան։

«Թաւշեայ յեղափոխութիւնը» իր լրումին հասաւ։ Ժամանակն է սոցիալիզմին ճամբայ բանալու դէպի Ազգային Ժողով եւ համակարգային արմատական փոփոխութիւն։

Իրավիճակը։

Պ.– Ես դպրոցին մէջ կը դասաւանդեմ հայերէն լեզու եւ երգ, գոր մեծ հաճոյքով կ'ընեմ, մանաւանդ երբ կը տեսնեմ մեր փոքրիկներուն փափաքն ու ուրախութիւնը հայերէն երգ մը սորվելու, հայերէն նոր դաս մը իւրացնելու ատեն։ Ուրախութիւնս զագաթնակէտին կը հասնի, երբ կը տեսնեմ, որ անոնք հետաքրքրուած են հայերէնով եւ յաճախ օտար բառերու հայերէնները կը հարցնեն։ Անհուն բերկրանքով կը լեցուի հոգիս, երբ պարտականութիւնները մեծ խանդավառութեամբ կը կատարեն, եւ մենք ալ, մեր կարգին, յատկանշական նուէրներով կ'ուզենք վառ պահել անոնց ոգեւորութիւնը։ Կը կազմակերպենք նաեւ մրցումներ եւ հանդէսներ. օրինակ Թարգմանչացի տօնին առթիւ յայտագիր մը պատրաստեցինք եւ կեդրոնին մէջ, պատարագի աւարտին, անոնք հանդէս եկան ասմունքով, երգով եւ ընթերցանութեամբ՝ մեծ ուրախութիւն պատճառելով իրենց ծնողներուն եւ գաղութիս անդամներուն։ Յաջորդ հանդէսը տեղի պիտի ունենայ Ս. Ծնունդին առթիւ, որուն մեծ ոգեւորութեամբ կը պատրաստուին մեր աշակերտները։ Այսպիսով մեր ծնողները իրօգեկ կ'ըլլան, թէ իրենց զաւակները յաճախելով ՀՕՄ–ի Շաբաթօրեայ վարժարանը, ոչ միայն հաճելի ժամանց կ'ունենան, այլեւ կը սորվին պահել իրենց ինքնութիւնը, լեզուն եւ մշակոյթը։

3401, Olivar Asselin, Montréal, Qc H4J 1L5

397, boul. des Prairies, Laval, Qc H7N 2W6

45 Hallcrown Place, Willowdale, On M2J 4Y4

Այցելեցէք **hitunes.ca** կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցէք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը

HITUNES.CA

Ունկնդրեցէք **triktrak.ca** կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցէք շահեկան հարցազրոյցներ

TRIKTRAK.CA



Innové
pour exalter

NISSAN INTELLIGENT MOBILITY MC

LE GRAND SOLDE DES FÊTES

LE ROGUE 2019 EST ENFIN ARRIVÉ!



LOCATION À PARTIR DE 256 \$ / MOIS
AVEC 2 995 \$ EN COMPTANT INITIAL

C'EST COMME PAYER

VALEUR AU DÉTAIL DE

59\$^{##}
/SEMAINE
PENDANT 60 MOIS

28 208\$

sur le Rogue S 2019 à traction avant.

OBTENEZ
JUSQU'À

6 000\$ DE RABAIS⁺
AU FINANCEMENT À TAUX STANDARD,
SUR AUTRES MODÈLES SÉLECTIONNÉS.



PATHFINDER 2018

JUSQU'À

**6 000\$ DE RABAIS
AU TOTAL⁺**



MURANO 2018

JUSQU'À

**5 500\$ DE RABAIS
AU TOTAL⁺**



QASHQAI 2018

JUSQU'À

**3 000\$ DE RABAIS
AU TOTAL⁺**

POUR CLIENTS ADMISSIBLES

OU
OBTENEZ

0%*
AU FINANCEMENT

CHOISISSEZ
VOTRE
CADEAU

PNEUS D'HIVER⁺
(VALEUR MAXIMALE DE 1 100 \$)

OU

VIDANGES D'HUILE⁺
PENDANT 5 ANS

— sur autres modèles sélectionnés. —

CONSULTEZ NISSANGABRIELANJOU.COM OU NISSANGABRIELJEANTALON.COM POUR PLUS DE DÉTAILS.

NISSAN
GABRIEL
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E.
Anjou, QC H1E 7K7

514 324-7777

nissangabrielanjou.com

«OUVERT LES SAMEDIS»

NISSAN
GABRIEL
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O.
Montréal, QC H3R 2E8

514 509-7777

nissangabrieljeantalon.com

«OUVERT LES SAMEDIS»

Offres en vigueur du 1er décembre 2018 au 2 janvier 2019. L'offre de location par l'entremise de NCF est basée sur une allocation de 16 000 km / an (allocation totale de 80 000 km pour un terme de 60 mois) avec kilométrage additionnel à 0,10 \$ / km. L'offre inclut un rabais des fêtes de 500 \$. Le premier paiement est requis à la signature du contrat. Les frais d'inscription auprès du RDPRM et les frais d'agent pour l'inscription (jusqu'à 77 \$ au total) ne sont pas compris et sont payables à la signature du contrat. Pour les offres de location et de financement, les taxes, immatriculation, droits spécifiques sur les pneus neufs (15 \$) et assurances sont en sus, et exigés à la signature du contrat. ^{##} Les paiements ne peuvent être faits hebdomadairement. Ils sont uniquement mentionnés à titre informatif. * Exemple de financement : le taux de 0 % au financement s'applique au Qashqai S 2018 à traction avant (AA00) et est basé sur un prix de vente de 21 563 \$, à un taux de financement à l'achat de 0 % pour un terme de 36 mois, ce qui équivaut à 36 versements mensuels de 599 \$ avec 0 \$ en comptant initial ou un échange équivalent. Les frais de crédit sont de 0 \$, pour une obligation totale de 21 563 \$. + Le rabais de 5 500 \$ / 3 000 \$ / 6 000 \$ (incluant le rabais fidélité / conquête ou le rabais pour nouveaux diplômés de 0 \$ / 500 \$ / 0 \$ et un rabais des fêtes de 500 \$) est applicable au financement à l'achat à un taux standard, sur approbation de crédit, uniquement par l'entremise de NCF, d'un modèle Murano Platine 2018 / Qashqai SL 2018 / Pathfinder Platine 2018. Ce rabais ne peut être combiné à un taux de location ou de financement subventionné ni à aucune autre offre et il sera déduit du prix de vente négocié avant les taxes. † L'offre des vidanges d'huile pendant 5 ans s'applique aux clients admissibles à l'achat au comptant, au financement ou à la location des modèles Micra 2018 / Versa Note 2018 et 2019 / Sentra 2018 et 2019 / Qashqai 2018 / Rogue 2018 et 2019 / Murano 2018 / Pathfinder 2018. L'offre consiste en un maximum de douze (12) visites à l'intérieur de 60 mois suivant l'achat du véhicule admissible. Chaque visite consiste en une vidange d'huile (en utilisant l'huile Nissan synthétique 0W20 pour moteur). Cette offre n'a pas de valeur d'échange au comptant et ne peut être combinée avec certaines offres. † L'offre des pneus d'hiver s'applique aux clients admissibles à l'achat au comptant, au financement ou à la location des modèles Micra 2018 / Versa Note 2018 et 2019 / Sentra 2018 et 2019 / Qashqai 2018 / Rogue 2018 et 2019 / Murano 2018 / Pathfinder 2018, et est valable pour les modèles de pneus sélectionnés uniquement. L'installation, les jantes et la mise au point des pneus ne sont pas incluses dans cette offre. Cette offre n'a pas de valeur d'échange au comptant. La valeur maximale des pneus d'hiver couverte par le concessionnaire est de 960 \$ / 780 \$ / 980 \$ / 910 \$ / 1 080 \$ / 1 100 \$ / 1 100 \$, taxes en sus, les montants varient selon le modèle. Si le client choisit des pneus d'hiver d'une valeur plus élevée, il devra payer la différence. Les offres sont sous réserve de l'approbation de crédit par Nissan Canada Finance; elles peuvent être modifiées, prolongées ou annulées sans préavis. Les concessionnaires peuvent fixer leurs propres prix. Visitez www.nissangabrielanjou.com ou www.nissangabrieljeantalon.com pour tous les détails. Des conditions s'appliquent. © Nissan Canada Inc., 2018.



BARRY
KAZANJIAN



KAREN
ANDJIAN



GARO
ANDJIAN



514 333. 3000



1655 RUE VIEL



11925 RUE VALMONT



4185 BOUL. GOUIN O.



6931-6937 BOUL. NOTRE-DAME



841 RUE PRINCIPALE



11285 RUE DROUART



12280 AV. ANTOINE-BERTHELET



11485 RUE FRIGON



12161 RUE GUERTIN



3740 RUE PIERRE-DAVAULT



4105 RUE CLAUDE-HENRI-GRIGNON



698 RUE FÉLIX-MCLERNAN



7040 RUE MÉTIVIER



4500 CH. DES CAGEUX app. 1001



11917-11921 RUE DESENCLAVES

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

CLASSÉS PARMI LES MEILLEURS COURTIER RE/MAX AU NIVEAU MONDIAL
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS WORLDWIDE

RE/MAX 3000
AGENCE IMMOBILIÈRE

SIÈGE SOCIAL: 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC H4N 3C5
PAVILLON: 2500 DES NATIONS 102. SAINT-LAURENT. OC H4R 3J9